



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Վ. Ի. ԼԵՆԻՆ

Թե Ի՞նչո՞ւ եմ քիչ եր մնում,
վոր «ԻՍԿՐԱ»-ն ՀԱՆԳԶԵՐ



ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԻԶ ԵՐ ՄՆՈՒՄ,
ՎՈՐ «ԻՍԿՐԱ»-Ն ՀԱՆԳՉԵՐ

Թարգմ. Լ. ԱՐՈՎՅԱՆ
Խմբ. Ա. ԱԴՈՅԱՆ



1939

A 38574

В. И. ЛЕНИН
Нам чуть не потухла
„Искра“

Партиздат 1934 Эривань

ԹԵ ԻՆՉՊԵՍ
ՔԻՉ ԵՐ ՄՆՈՒՄ, ՎՈՐ
„ИСКРА“-Ն ՀԱՆԳՉԵՐ՝

Առաջ յեա յեկա Յյուրիխ, յեկա մենակ և դրանից առաջ
Հտեսնվեցի Արսենյիվի (Պոտրեսովի) հետ: Յյուրիխում Պ. Բ.
Ակսելըրդն ինձ ընդունեց դրկաբաց, և յեա յերկու որ անցրի շատ
մտերմական զրույցով: Զրույցն ասես վաղուց Հտեսնված բարե-
կամենների միջև լինե՞ր՝ ամէն բանի և այլ շատ բանի մասին, ա-
ռանց կարգի, գործնական ընդլթից բոլորովին զուրկ: Գործ-
նական հարցերի շուրջը Պ. Բ. առհասարակ քիչ բան mitspre-
chen kann *. նկատելի յեր, վոր նա Գ. Վ. Պլեխանովի կողմն և
ձգոււմ, նկատելի նրանով, թե նա ինչպես պնդում եր, վոր հան-
դեսի համար տպարանը ժընեվում սարքվի: Իսկ ընդհանրապես
Պ. Բ. շատ եր Վշողոքորթում» (ներողությունն արտահայտությանս
համար), ասում եր, թե իրենց համար տմեմ ինչ կապված ե մեր
ձեռնարկման հետ, թե այդ իրենց համար վերածնությունն ե, թե
«մենք» հնարավորությունն կատանանք Գ. Վ. ծայրահեղություն-
ների դեմ ել վիճելու—այս վերջինը յեա հասկապես նկատեցի, և
հենց հետագա տարողջ «հիստորիան» ել ցույց տվեց, վոր դրանք
առանձնապես նշանակալից խոսքեր ելին:

Գալիս եմ ժընեվ: Արսենյիվը նախազգուշացնում ե, վոր պետք
ե շատ զգուշ լինել Գ. Վ.-ի հետ, վորը պառակտումից² շատ ե
զրկված և կասկածավոր ե: Այս վերջինի հետ զրույցներն իրոք
միանգամից ցույց տվին, վոր նա իրոք կասկածավոր ե, կաս-

*—կարող ե խոսելու լսմը:

կաժամիրտ եւ և rechthaberisch մինչև nec plus ultra*: Յես աշխատում եյի զգուշափորություն պահպանել, շրջանցելով «հիվանդ» կետերը, բայց այդ մշտական արթնապահությունը, իհարկե, չէր կարող չափազանց ծանր չանդրադառնալ տրամադրության վրայ: Յերբեմնակի փոքրիկ բաղխումներ» եւ եյին լինում՝ իբրեւ Գ. Վ.-ի դուրաբորբոք ունայիկ յուրաքանչյուր պատիկ նկատողության առթիւ, վոր ընդունակ էր թեկուղ նվազ չափով սառնցնելու կամ մեղմելու (պառակտումից) բորբոքված կրքերը: «Բաղխումներ» կային նույնպէս ժուրնալի տակտիկայի հարցերի շուրջը. Գ. Վ.-ն միշտ ցուցաբերում էր բացարձակ անհանդուրժողություն, ուրիշէ պատճառաբանությունների մեջ թափանցելու անընդունակություն եւ չկամեցողություն եւ հետեւ եւ կեղծություն, ուղղակի կեղծություն: Մեր հայտարարումները, թի մենք պարտաւոր ենք ըստ հնաբանության ներդրամիտ լինել դեպի Ստրուվեն, վորովհետեւ մեզ իմենք անպարտ չենք նրա նվազագիշտի համար՝ մենք ինքներս, Գ. Վ.-ն եւ նույն քվում, չապստամբեցինք այն ժամանակ, յերր պետք էր ապստամբել (1895, 1897). Գ. Վ.-ն բացարձակապէս չէր ցանկանում իր՝ թեկուղ նվազագույն՝ մեղքը հանձն առնել, զլուխն ազատելով աշխարհ անպետք տառաճառաբանություններով, վորոնք հետաքննում, եւ վոչ թե պարզաբանում եյին հարցը: Ապագա խմբագրակիցների միջև տարվող ընկերական զրույցի մեջ այդ... դիվանագիտականությունը չափազանց անհաճոյս եւր ազդում. ինչիւ իրեն խաբել, ասելով, թե 1895 թ. իրեն, Գ. Վ.-ին, իբրեւ թե «հրամայված» էր (??) «չկրակել» (Ստրուվենի վրա), իսկ ինքը սովոր եւ անել այն, ինչ հրամայված եւ (հենց այդ եւ վոր կա)³: Ինչիւ խաբել իրեն, հաժառացնելով, թե 1897 թ. (յերբ Ստրուվեն «НОВОЕ СЛОВО»-յում⁴ գրում էր, թե նախապէս ունի հերքելու մարքսիզմի հիմնական գրող թիւերից մեկը) ինքը, Գ. Վ.-ն, դեմ չէր յեւնում, վորովհետեւ բանավեճ աշխատակիցների միջև մի ժուրնալի մեջ՝ բացարձակապէս չի հասկանում (յերբեք եւ չի հասկանա): Այդ կեղծությունը սարսափելի զրգուում էր, մանավանդ վոր Գ. Վ.-ն աշխատում էր այդ այնպէս դուրս բերել, իբր թե մենք չենք ցանկանում անխնա կռիւ

*—Իրեն միշտ համարում եւ չափից դուրս արդարացի յոմը:

Ստորագրելի դեմ, իբր թե մենք ուզում ենք «ամեն ինչ հաշտեցնել»
 և այլն: Տաք ժինաբանություններ կային նաև ժողովուրդի կշիռում
 բանավեճեր մղելու մասին առհասարակ. Գ. Վ.-ն դրան դեմ էր և
 մերպատճառաբանությունները լսել չէր ուզում: Դեպի «զաշտակից-
 ները» նա ատելություն էր ցուցաբերում, վոր անպատշաճության էր
 հասնում (կասկած լրտեսության մեջ, մեղադրանք չարչիության
 համար, հայտարարում, թե ինքն անվարան «եղնդակահարեր»
 նման «զավաճաններին» և այլն): Ամենահեռավոր ակնարկներն այն
 մասին, թե նա ինքն էլ ծայրահեղության մեջ ընկավ (որինակ՝ իմ
 ակնարկը մասնավոր նամակներ հրապարակելու՝ և այդ ձևի ան-
 զուշափորության մասին), Գ. Վ.-ին ուղղակի կատաղի դրդման
 և նկատելի վրդովման էլին հասցնում: Ակներև է, անբավակա-
 նությունն անում էր թե՛ նրա և թե՛ մեր մեջ: Նրա մեջ այդ
 արտահայտվեց, ի միջի այլոց, հետևյալում. մենք ունեյինք
 խմբագրական հայտարարության մի նախագիծ («նմբագրության
 կողմից»), վորի մեջ խոսվում էր հրատարակությունների խնդիր-
 ների ու ծրագրի մասին. այն դրված էր (Գ. Վ.-ի սեսակետով)
 «պորտոներիստական» վրդով. թույլ էր արվում բանավեճ աշխա-
 տակիցներին միջև, տոնը համեատ էր, վերապահություն էր արվում
 «եկոնոմիստներին» հետ վեճը խազադ վերջացնելու հնարավորու-
 թյան մասին և այլն: Հայտարարության մեջ ընդգծվում էր, թե մեր
 պատկանելությունը կուսակցությանը և թե՛ նրա միավորման համար
 աշխատելու ցանկությունը: Յերբ յես դեռ յեկած չեյի, Գ. Վ.-ն
 կարդացել էր այդ հայտարարությունը: Արանյեմի և Վ. Բ. Ջատու-
 լիչի հետ, կարդացել էր և ըստ ելության վոչինչ չէր առարկել:
 Նա ցանկություն հայտնեց միայն ուղղելու վրձը, բարձրացնելու
 այն, թողնելով մտքի ամբողջ ընթացքը: Հենց դրա համար էլ Ա. Ն.
 Պոտրեսովը թողել էր նրա մոտ հայտարարությունը: Յերբ յես
 յեկա, Գ. Վ.-ն այդ մասին ինձ վոչ մի խոսք չստաց, իսկ միջանի
 որ անց, յերբ յես նրա մոտ եյի, հայտարարությունը հետ տվեց
 ինձ—ասել ուզում էր, թե՛ ահա, վկաների ներկայությամբ, ան-
 վրա հանձնում եմ, չեմ կորցրել: Սեա հարցնում եմ՝ ինչու նրա
 մեջ նա չի կատարել ծրագրած փոփոխությունները: Նա պատճառա-
 բանում է, թե՛ այդ հետո էլ կարելի չե, շատ ժամանակ չի պա-
 հանջվում, այժմ չարժի: Սեա վերցրի հայտարարությունը, ինքս

ուղղեցի (այդ՝ Ռուսաստանում արած սեպագիրն էր) և յերկրորդ անգամ (Վ. Ի.-ի նիրկայությամբ) կարդացի Գ. Վ.-ին, ընդ-վորում յես արդեն ուղղակի խնդրեցի նրան վերցնել այդ բանը և ուղղել: Նա նորից դես ու դեն ընկավ, աշխատանքը գցելով կողքին նստած Վ. Ի.-ի վրա (մի բան վոր բուրրովին տարորինակ էր, քանի վոր մենք այդ մասին Վ. Ի.-ին խնդրել չեյինք և նա չէր ել կարողանա ուղղել, «բարձրացնելով» տոնը և հայտարարությանը մանիֆեստի բնույթ տալով:

Բանն այսպես շարունակվում էր մինչև համագումարը («Աշ-խատանքի ազատագրում» ամբողջ խմբի, Գ. Վ.-ի, Պ. Բ.-ի, Վ. Ի.-ի և մեր յերկուսի՝ մեր յերրորդի⁶ բացակայությամբ): Վեր-ջապես Պ. Բ.-ն յեկավ և համագումարը կայացավ: Դեպք հեռա-կան միությունը (բունդը)⁷ մեր վերաբերմունքի հարցում Գ. Վ. ցուցաբերում է արտասովոր անհանդուրժողություն, այն հայ-տարարելով ուղղակի վոչ-սոցիալ-դեմոկրատական կազմակերպու-թյուն.....*) ասելով, թե մեր նպատակն է՝ կուսակցությունից դուրս շարեւէ այդ բունդը.....*) Եւ անպատշաճ ճառերին արած մեղ վոչ մի առարկությունը վորեն արդյունք չունեցավ: Գ. Վ.-ն ամբող-ջովին մնաց իր կարծիքին.....*) Եւ հարցի առթիվ վոչ մի բանա-ձև չընդունվեց: Համագումարում միատեղ կարգացինք «հայտա-րարությունը». Գ. Վ.-ն իրեն տարորինակ էր պահում, լռում էր, վոչ մի փոփոխություն չառաջարկեց, չծառայեցավ այն բանի դեմ, վոր այնտեղ բանավեճ և թույլատրվում, ընդհանրապես ասես մի կողմ էր քաշվում, ուղղակի մի կողմ էր քաշվում, չէր ցանկա-նում մասնակցել և միայն ի միջի այլոց, հարևանցիորեն, թու-նավոր ու չար մի նկատողություն չպրտեց, թե այ ինքը (այ ի-րենք, այսինքն «Աշխատանքի ազատագրում» խումբը, վորի մեջ նա դիկտատոր է), իհարկե, այդպիսի հայտարարություն չէր դրի: Գ. Վ.-ի ի միջի այլոց նստած, ի դեպ՝ այլ բովանդակության մի ինչ-վոր փրադի ավելացրած, այդ նկատողությունը ինձ ա-ռանձնապես տհաճորեն զարմացրեց. խմբագրակիցների խորհրդ-դակցություն և, և ահա խմբագրակիցներից մեկը (վորին յե-կու անգամ խնդրել եյին տալ հայտարարության իր նախագիծը

* Միջանի բառ բաց և թողած: Խմբ.:

կամ մեր հայտարարութեան ուղղման նախագիծը) վոչ մի փոփոխութեամբ չի առաջարկուած, այլ միայն հեղինակներն նկատուած են, թե այ ինքը, իհարկէ, այդպէս չեր գրի (այդպէս յերկշտ, համեստ, ուղղորտունիւթորեն՝ ուղղուած եր նա ասել): Այդ արդեն պարզ ցուցած է, վոր նրա և մեր միջև նորմալ հարաբերութեան ներքին յարաբերութեան շունհնէն: Հետո—զանց եմ աւելուած համազումարի ավելի քիչ կարեւոր հարցերը—զրկուած են դեպի Բորոն⁸ ու Միխ. Իվ. Տուգան-Բարանովսկին վերաբերմունքի հարցը: Մենք կողմնակից ենք զայնամանակէն հրապարակման (մեզ այդ անելու անխառնակութեան միտքով եր Գ. Վ.-ի խտրութեանը. մենք դրանով (ուղղուած են) չինք ցուց տալ, վոր ուրիշ հարաբերութեան ենք ցանկանալու: Գ. Վ.-ի անհրաժեշտիւթի խտրութեանը ուղղակի մի տեսակ ընտելութեան միտքով եր ըտղոքելու, պաշտպանելու նրա հակառակորդներին: Վերա Իվանովիւան շատ նուրբ նկատեց, վոր Գ. Վ.-ն միշտ այնպէս եր բանավիճուած, վոր ընթերցողի մէջ համակրանք եր հարուցում դեպի իր հակառակորդը): Գ. Վ.-ն շատ սաւանք չոր հայտարարուած եր, վոր ինքը ըտլորովին համաձայն չե, և դնմոնստրուտիվ կերպով լուծուած ե Պ. Բ.-ի և Վ. Բ.-ի հետ մեր ունեցած բանական յերկար խոսակցութեան ներքին ընթացքում, մինչ դրանք դեմ չեն նաեւ մեզ հետ համաձայնելու: Այդ առաջադրանքով անցնում եր ինչ-վոր չափազանց ծանր միջոցառում. գործն անպայման այնպիսի տեսք եր ստանում, թե Գ. Վ.-ն ուղղութեամբ եր դնում կամ ինքը կամ հրապարակ այդ «անզգամներին»: Տեսնելով այդ, մենք յերկուսս՝ Արսենյեվի հետ վորոշեցինք զիջել և յերեկոյան նիստի հենց սկզբից հայտարարեցինք, վոր «Գ. Վ.-ի պնդումով հրաժարվում ենք: Այդ հայտարարութեանը լուծյամբ ընդունվեց (կարծես թե այդ ինքնին հասկանալի չե, վոր մենք չինք կարող չզիջել): Մեզ բավականին վրդովել եր այդ «ուղղութեան» միջոցների միջոցառումը» (ինչպէս հետագայում Արսենյեվը ձեռնկերպեց)—Գ. Վ.-ի անսահմանափակ իշխելու ցանկութեանը ակներեւ գրականութեան եր: Առաջ, յերբ մենք մասնավոր կերպով զրուցում եյինք Բորոյի մասին (Գ. Վ., Արսենյեվը, Վ. Բ. և յես, անառարտ, յերեկոյան ման գալիս), Գ. Վ.-ն տաք վեճից հետո ձեռքը ուսիս դնելով հայտարարեց. «Ես, ախր, պարոններ, պայմաններ չեմ դնում, այդ ամենը համազումարում այնտեղ կըլն»

նենք միասին և միասին կվորոշենք: Այն ժամանակ այդ ինձ
 շատ հուզեց: Բայց դուրս յեկավ, վոր համապատասխան հենց հա-
 կառակն ստացվեց. համապատասխան Գ. Վ.-ն մեկուսացավ ընկե-
 րակա՛ն քննարկումից, զայրացած լռում եր և իր լուսթյունով
 ակնհայտորեն «պայման եր դնում»: Ինձ համար այդ՝ ներդրության
 սուր արտահայտումն եր (թեպետ միանգամից այդքան պարզ դեռ-
 ևս չձևակերպեցի ապավորություններս), իսկ Արսենյեվն ուղ-
 ղակի հայտարարեց. «Եյն նրան այդ զիջումը չեմ մոռանա: Գա-
 լիս և շաբաթը: Յես արդեն ստույգ չեմ հիշում, թե այդ օրն ին-
 չի մասին ելինք խոսում, բայց յերեկոյան, յերբ մենք բոլորս
 միասին գնում ելինք, նոր կոնֆլիկտ բոլորովեց: Գ. Վ.-ն ա-
 սում եր, թե մի անձնավորության (վորը գրականության մեջ
 դեռ յելույթ չի ունեցել, բայց վորի մեջ Գ. Վ.-ն ուզում և փիլի-
 սոփոյական առաջնորդ տեսնել: Յես այդ անձնավորությանը չեմ
 ճանաչում. նա հայտնի չե իր կույր խոնարհումով Գ. Վ.-ի առջև»
 պետք և պատվիրել փիլիսոփայական թեմայով մի հոգոված, և ա-
 հա Գ. Վ.-ն ասում ե՛ր յես նրան խորհուրդ կտամ հոգովածն սկսել
 Կառլեկու դեմ մի նկատողությունով—այն մտքով թե՛ մի նրան
 նայեք, արդեն «քննադատ» ե դարձել, «Neue Zeit»-ում¹⁰ անց և
 կացնում «քննադատներին» փիլիսոփայական հոգովածները և լիակա-
 տար ասպարեզ չի տալիս «մտքըսխառններին» (այսինքն Պլեխա-
 նովին): Լսելով Կառլեկու դեմ (վոր արդեն ժուրնալի աշխատա-
 հից եր հրավիրված) այդպիսի կծու յելույթի նախադի. մասին,
 Արսենյեվը վրդովվեց և յեռանդադին ծառացավ դրա դեմ, դա՛նե-
 լով այդ բանը անտեղի: Գ. Վ.-ն փքվեց ու դայրացավ, յես միա-
 ցա Արսենյեվին: Գ. Բ.-ն ու Վ. Ի.-ն լուռ ելին: Մի կես ժամ
 անց Գ. Վ.-ն մեկնեց (մենք գնում ելինք նրան դեպի նավ ուղեկ-
 ցելու), ընդվորում վերջին ժամանակը նա նստած եր լուռ, ամ-
 պից ել խոժոռ: Յերբ նա հեռացավ, մեր բոլորի սրտից կարծես
 քար ընկավ և զրույցը զավացավ: Հետևյալ օրը, կիրակի (այ-
 սօր սեպտեմբերի 2-ն և, կիրակի: Կնշանակի այդ մի շաբաթ ա-
 ռա՛վ եր: Իսկ ինձ թվում և, թե այդ մոտ մի ամառի՝ առաջ եր:
 Ինչքա՛ն այդ արդեն հեռու յե մնացել), ժողովը նշանակված և
 վոչ թե մեզ մոտ, ամառանոցում, այլ Գ. Վ.-ի մոտ: Գալիս ենք
 մենք այդտեղ, Արսենյեվն առաջ յեկավ, յես՝ հետո Գ. Վ.-ն

Պ.Բ.-ին և Վ. Ի.-ին ուղարկում և ասելու Արսենյեվին, թե ինքը, Պ. Վ., հրաժարվում է խմբագրակցությունից, բայց ուղում է լինել հասարակ աշխատակից։ Պ. Բ.-ն հեռացավ, Վ. Ի. բոլորովին շփոթված, իրեն կորցրած, մոռում է Արսենյեվին. «Ժորժն անբավական է, չի ուղում... Մտնում եմ յես, Ինձ համար դուռը բացում է Պ. Վ.-ն և ձեռք է մեկնում մի քիչ տարրերի՝ ապագայ, հետո հեռանում եմ Ես մտնում եմ սենյակը, վերանայ նստած եմ Վ. Ի.-ն և Արսենյեվը տարրերի՝ դեմքերով։ Հը, ի՞նչ կա, պարոններ,— ասում եմ յես։ Մտնում է Պ. Վ.-ն և մեզ կանչում և իր սենյակը Այնտեղ նա հայտարարում է, թե աղելի լավ է լինի աշխատակից, հասարակ աշխատակից, վորովհետև այլապես միայն բաղնիքներ կլինեն, թե ինքը, ըստ յերևութին, զարծին այլ կերպ է նայում, քան մենք, թե նա հասկանում, հարգում է մեր, կուսակցական, տեսակետը, բայց չի կարող նրան հարել։ Թող խմբագիրներ մենք լինենք, Բակ ինքը աշխատակից։ Մենք այդ բանը լսելով բոլորովին ապշեցինք, ուղղակի ապշեցինք և սկսեցինք հրաժարվել Այն ժամանակ Պ. Վ.-ն ասում է՝ դե, յեթե միասին, ապա ի՞նչպես քվեարկենք. քանի՞ ձայն ե—Վեց։ Վեցը անհարմար ե—«Եհ, թող Պ. Վ.-ն յերկու ձայն ունենա,— միջամտում է Վ. Ի.-ն,— թե չե նա միշտ մենակ կլինի. յերկու ձայն տակտիկայի հարցերում։ Մենք համաձայնում ենք։ Այն ժամանակ Պ. Վ.-ն իր ձեռքն է առնում կառավարման սանձերը և սկսում է խմբագրի տոնով բաղնիք բաժիններն ու հոգեվածնեքը ժողովապես համար, այդ բաժինները ներկայաներից մեկ. սրան, մեկ մյուսին բաժանելով—մի տոնով, վոր առարկություն չի թուլատրում։ Մենք բոլորս նստած ենք ջուրը կոխվածների պես, անտարբեր համաձայնելով ամեն քանի և տակավին ի վիճակի չլինելով մարտի կատարվածը։ Մենք դուռ ենք, վոր հիմարի դրության մեջ ընկանք, վոր մեր նկատողությունները դնելով աղելի յերկուսն են դառնում, վոր Պ. Վ.-ն «վանում ե» (չի հերքում, այլ վանում է) այդ առարկությունները աղելի ու աղելի թեթևորեն ու անփուլ, վոր «նոր սխտանք» de facto* աճող-լողին հաճախար է Պ. Վ.-ի ամենաաշխատասեր իշխելուն և

վոր Գ. Վ.-ն, հիանալի հասկանալով այդ, չի քաշվում ըստ ամենայնի իշխելուց և այնքան ել հաշվի չի առնում մեզ: Մենք դիտակցում եյինք, վոր վերջնականապես հիմարացված ենք և զըլխովին ջարդված, բայց դեռ լիովին չեյինք իրացնում մեզ մեր դրությունը: Դրա փոխարեն, հենց վոր մենք մենակ մտայինք, հենց վոր շոգենավից իջանք և զնացինք մեր տաճարանոցը,—յերկուսս ել միանգամից պոռթկացինք և կտատաղի ու զայրագին խոտքեր ժայթքեցինք Գ. Վ.-ի դեմ:

Բայց նախքան այդ խոտքերի բռնադուլությունը շարադրելը և այն ասելը, թե ինչ հետևանք ունեցան դրանք, յես սկզբից մի փոքր շեղում կկատարեմ և հետ կդառնամ: Ինչպէս մեզ այդպես վրդովեց Պլեխանովի լիակատար իշխելու գաղափարը (անկախ նրա իշխելու ձևից): Առաջ մենք միշտ այսպէս եյինք մտածում. խմբագիրներ կլինենք մենք, իսկ նրանք՝ մերձավոր մասնակիցներ: Յես առաջարկում եյի հենց այդպէս ել (ձևակա-նորեն) ղենլ հենց սկզբից (դեռևս Ռուսաստանից), Արսենյևին առաջարկում եր ձևականորեն չղենլ, այլ ավելի լավ ե գործել «վոնց վոր լաֆն ե» (վորը նրա ասելով նույնը կդառնա),—յես համաձայնում եյի: Բայց յերկուսս ել համաձայն եյինք, վոր խմբագիրներ պետք ե լինենք մենք թե՛ այն պատճառով, վոր «ծերերը» չափազանց անհանդուրժող են, և թե՛ այն պատ-ճառով, վոր նրանք չեն կարողանա ճշտապահորեն տանել խմբա-դրական սև ու ծանր աշխատանքը. հենց այդ նկատառումներն եյին, վոր մեզ հաժար վորոշում եյին գործը, իսկ նրանց գաղափարա-կան դեկլամարությունը մենք բոլորովին սիրահոժար ընդունում եյինք: Ժընեվում իմ խոսակցությունները Պլեխանովի մերձավորազույն ընկերների և յերիտասարդ կողմնակիցների հետ («Մոցիալ-դեմոկրատ»¹¹ խմբի անդամներ, Պլեխանովի վաղեմի կողմնա-կիցներ, աշխատավորներ, վոչ բանվորներ, այլ աշխատավորներ, հասարակ, գործի մարդիկ, վոր անձնվեր են Պլեխանովին), այդ խոսակցությունները լիովին ամրացրին իմ (և Արսենյևի) այն միտքը, թե՛ հենց այդպէս մենք պետք ե ղենք գործը. այդ կողմ-նակիցներն իրենք եյին մեզ հայտարարում, առանց պատեղատ ընկնելու, թե խմբագրությունը ցանկալի յե Գերմանիայում, վորովհետեւ այդ մեզ կդառնի Գ. Վ.-ից ավելի անկախ, թե յեթե

ծերերն իրենց ձեռքին պահեն խմրազրակա՛ն փաստական աշխատանքը, այդ համազոր կլինի սարսափելի քաջջուկների, դուցե և գործի տապալման: Իսկ Արսենյեվը նույն նկատառումներով անպայման Գերմանիայի կողմն եր:

Իմ նկարագրության մեջ, թե ինչպես քիչ եր մնում, վոր «Искра»-ն հանգչի, յես կանգ առա կիրակի ն. տ. ոգոստոսի 26-ի յերեկոյան մեր՝ տուն վերադառնալու վրա: Հենց վոր մենք մե՜նակ մնացինք, շոգնաժվից իջնելով, ուղղակի զայրույթի արտահայտությունների մի հեղեղ թափեցինք: Կարծես մենք հիրավի պոռթկացել էինք, ծանր մթնոլորտը ամպրոպի յեր փոխվել: Մենք մինչև ուշ յերեկո շրջում եյինք մեր դռակի մի ծայրից մյուսը, բավականին մոտ զիշեր եր, չորս կողմը ամպրոպ եր ու կայծակներն եյին փայլատակում: Մենք շրջում եյինք ու վրդովվում: Միտա ե գալիս, սկսեց Արսենյեվը մի հայտարարությունով, թե անձնական հարաբերությունները Պլեխանովի հետ՝ նա հավարում ե մի անգամ ընդմիջտ խզված և յերբեք չի վերականգնի. դործնական հարաբերությունները կմնան, — յես նրա հետ անձամբ fertig *: Նրա վերաբերմունքը վերափոխական ե այն աստիճան, վոր մեզ հարկադրում ե կասկածել, վոր նա մեր վերաբերմամբ շատ «անմաքուր» մտքեր ունի (այսինքն, վոր նա մտքում մեզ հավասարեցնում ե Streber-ները**): Նա մեզ քամահրում ե և այլն: Յես ամբողջովին պաշտպանում եյի այդ մեղադրանքները: Իմ «սերտհարվածությունը» Պլեխանովին՝ ասես դանակով կտրվեց, և աներևակայելի չափով վերափոխական ու դառն եր ինձ համար: Յերբեք, յերբեք իմ կյանքում վորևե մարդու յես չեմ վերաբերվել այնպիսի անկեղծ հարգանքով ու մեծարանքով, vénération***, վոչ մեկի առջև յես այնպիսի «խոնարհությամբ» չեմ պահել ինձ, — և յերբեք այնպիսի կոպիտ «աքացի» չեմ զգացել: Իսկ իրոք ճիշտ այնպես ստացվեց, վոր մենք աքացի ստացանք. մեզ յերեխաների պես ահ տվին, ահ տվին նրանով, թե հասակավորները մեզ կզցեն և մենակ կթողնեն, և յերբ մենք վախեցանք (լինչ խայտառակություն), մեզ անպատկառորեն հետ քաշեցին: Մենք

* — վերջացրի յոմը.:

** — կալյերիստների յոմը.:

*** — ակնածությամբ: յոմը:

այժմ բոլորովին պարզ գիտակցեցինք, վոր Պլեխանովի առավո-
տյան խմբագրակից լինելուց հրաժարվելու մասին արած հայտա-
րարությունը հասարակ թակարդ եր, հաշված շախմատային շար-
ժում, մի ծուղակ եր միսմիտ «պիժոններին» համար. այդ վոչ մի
կասկածի յենթակա չեր, վորովհետև յիթե Պլեխանովը անկեղծ
վախենում եր խմբագրակցությունից, վախենում եր գործն առ-
գելակելուց, վախենում եր մեր միջև ավելորդ բաղխումներստեղ-
ծելուց, — վոչ մի կերպ չեր կարող մի բռպե անց ցույց տալ
(և կոպտորեն ցույց տալ), վոր իր խմբագրակցությունը բոլոր-
ովին համազոր ե իր Ալախմբագրությանը: Դե, յերբ մի մարդ,
վորի հետ մենք ուղում ենք մոտիկ ընդհանուր գործ բռնել,
նրա հետ ամենամտերիմ հարաբերության մեջ մտնելով, յերբ
այդպիսի մարդը ընկերների վերաբերմամբ շախմատային շարժում
ե գործի դնում, — այստեղ արդեն տարակուսելու բան չկա, թե
նա վատ մարդ ե, ուղղակի վատ, թե նրա մեջ ուժեղ են անձ-
նական, մանր ինքնասիրության և փառասիրության մոտիվները,
թե նա ակեղծ մարդ չէ: Այդ հայանադործությունը — դա մեզ հա-
մար իսկական հայանադործություն եր — մեզ շանթի նման ազ-
դեց, վորովհետև մինչ այդ մոմենտը մենք յերկուսս ել սիրահար-
ված ելինք Պլեխանովին, և, ինչպես սիրելի մարդու, նրան արեն
ինչ ներում ելինք, աչք ելինք վառում նրա բոլոր պակասու-
թյունների առջև, մեզ բոլոր ուժով հաղթատացնում ելինք, թե
այդ պակասությունները չկան, թե դրանք մտնր բաներ են, թե
այդ մանր բաներին ուշադրություն դարձնում են միայն այն
մարդիկ, վորոնք բավականաչափ չեն դնահոտում սկզբունքները:
Յեղ տես, հարկ յեղավ, վոր մենք ինքներս ակնառու համոզվենք,
վոր այդ «մանր» պակասություններն ընդունակ են վանելու
ամենանշիրված բարեկամներին, վոր թերետիկական իրավացի-
ության վոչ մի հաղատ ընդունակ չե հարկադրելու, վոր մոռացվեն
նրա վաճող հաակությունները: Մեր զայրույթն անսահման մեծ
եր. իդեալը խորտակված իր, և մենք հաճույքով վոտնահարում
ելինք նրան իբրև տապալված մի կուռք. ամենասուր մեղադրանք-
ներին վերջ չկար: Այսպես չի կարելի՝ վճռեցինք մենք: Մենք
չենք ցանկանում և չենք աշխատի, չենք կարող միասին աշխատել
այդպիսի պայմաններում: Բարձր մնաս, ժուրնալ: Մենք ամեն ինչ

Թողնում ենք և ղնում մուսաստան, իսկ այնտեղ գործը նորից
շլուկն կբերենք և կսահմանափակվենք որաթերթով: Մենք չենք
ուզում խաղալիք լինել այդ մարդու ձեռքին. ընկերական հարա-
բերություններ նա չի թույլ տալիս, չի հասկանում: Մեր վրա
վերցնել խաղաղությունը մենք չենք վստահանում, և հիմա պարզա-
պես զգվելի կլինեն այդ, հենց այնպես դուրս կգար այդ, իբրե
թե մենք միայն խաղաղական սեղերի հետևից ելինք ընկած,
իբրե թե մենք Streber-ներ ելինք, կարյերիստներ, իբրե թե մեր
մեջ ելնույնպիսի սնամիասություններ խոսում, միայն ավելի փոքր
տրամաչափի... Դժվար է բավականաչափ ճշգրտությամբ նկա-
րագրել մեր վիճակը այդ յերեկոյան. այդ՝ մոգու մի այնպիսի
բանդ, ծանր, պղտճր վիճակ եր: Այդ մի իսկական դրամա յեր,
ամբողջ մի հրաժեշտ այն բանից, ինչ սիրած մանկան պես գու-
դուրել ելիր յերկար օրերին, ինչի հետ անխղճիորեն կապում
եյիր քո կյանքի աշխատանքը: Յեվ ամենը նրանից, մոր մենք
առաջ սիրահարված ելինք Պիխանովին. չլինեիր այդ սիրահար-
վածությունը, մենք դեպի նա ավելի պաղաճյուն, ավելի սովոր-
ական լինեյինք վերաբերվելիս, նրա վրա միջին-ավելի կողմնակի
լինեյինք նայելիս, — մենք նրա հետ մեղ ուրիշ կերպ կպահեյինք
և չեյինք կրի այնպիսի, բառի տառացի խառնով, փլուզում,
այնպիսի «բարոյական բաղանիք», ըստ Արսենյևի բոլորովին
ճիշտ արտահայտութեամբ: Այդ՝ կյանքի ամենատուր, վերավո-
րական-սուր, վերավերական-կոպիտ դասն եր: Կրտսեր ընկերները
հսկայական սիրուց դրված՝ «գուրում-գուրգուրում ելին» մեծին,
իսկ նա այդ սիրո մեջ մտնում և ինտրիգի մթնոլորտ և հար-
կադրում նրանց զգալ իրենց վոչ թե փոքր յեղբայրներ, այլ
հիմարներ, մորոնց քեթից բռնած մտն են ածում, խաղալիքներ,
մորոնց կարելի չե ըստ քմահաճության շարժել, թեկուզ հենց
անշուրջ Streber-ներ, մորոնց պետք և ավելի ուժգին վախեցնել
և ճգմել Յեվ սիրահարված պատանեկությունն իր սիրո առաջ-
կայից դառն խրատ և ստանում պետք և բոլոր մարդկանց վերա-
բերվել «առանց սանտիմենտալության», պետք և փայտը ձեռքից
վար չզցել: Մենք այն յերեկո անսահման քանակությամբ այն-
պիսի դառն խոսքեր ասացինք: Փլուզումի հանկարծակիությունը,
բնական է, քիչ չափազանցություններ ել չհարուցեց, բայց այդ

դառն խոսքերն իրենց հիմքում ճիշտ եյին։ Կարացած մեր սիրա-
հարվածությունից՝ մենք մեզ եյապես ստուկներ յես եյինք
պահում, իսկ ստորակ լինելն անարժան բան է, և այդ գիտակցու-
թյան վերավորանքը դեռ հարյուրապատիկ մեծացավ նրանով, վոր
մեր աչքերը բացեց ճառ՝ ինքը մեր կաշու վրա...

Մենք, վերջապես, գնացինք մեր սենյակները՝ քնելու, հաստատ
վճռած, վոր վաղն և եթ կհայտնենք Պլեխանովին մեր դայրույթը,
կհրաժարվենք ժուրնալից և կգնանք, թողնելով միայն որաթեր-
թը, իսկ ժուրնալի նութերը կհրատարակենք բրոշյուրներով. իր-
րև թե՛ գործը դրանից չիտուժի, իսկ մենք կազատվենք «այդ
մարդու» հետ մերձավորագույն հարաբերություններ ունենալուց։

Մյուս որը արթնանում եմ սովորականից ավելի վաղ. ինձ
գարթեցնում են աստիճանների վրայի վոտնաձայնը և Պ. Բ.-ի
ձայնը, վորը բաղխում է Արսենյեվի սենյակի դուռը։ Յես լսում
եմ, թե ինչպես Արսենյեվը պատասխանում է, բացում է դուռը.
լսում եմ այդ ու մտածում ինձ ու ինձ՝ Արսենյեվը սիրտ կանխ
արդյոք ամեն ինչ միանգամից ասելու. իսկ ավելի լավ է միանգա-
մից ասել, անրաժեշտ է միանգամից, չձգձգել գործը։ Լվացվելով
ու հագնվելով՝ մտնում եմ Արսենյեվի մոտ, վորը լվացվում է։
Ակսերլոդը մեծ աթոռին է նստած՝ մի քիչ ձգված դեմքով։ Ահա
NN-ը, դիմում է ինձ Արսենյեվը — յես Պ. Բ.-ին ասացի, վոր
վորոշել ենք Ռուսաստան գնալ, վոր գործն այսպես ասանել չի կա-
րելի։ — Յես, իհարկե, լիովին համամիտ եմ և Արսենյեվին կողմա-
կից։ Ակսերլոդին մենք, առանց ջաղվելու, պատմում ենք ամեն
ինչ, այնքան չճաղվելով, վոր Արսենյեվը նույնիսկ ասում է, թե
մենք կտակածում ենք, վոր Պլեխանովը մեզ Streber-ներ համա-
բելիս լինի։ Ակսերլոդն առհասարակ կիսահամակիր է մեզ, դառնա-
դին որորում է դուռը և վերին աստիճանի հուղվածի, շմածի,
շիրթվածի տեսք տալիս իրեն, բայց այդտեղ և եթ յետանգադին բո-
ղոքում և բղավում, վոր այդ արդեն ճիշտ է, թե Պլեխանովը զանա-
զան ոչակասություններ ունի, բայց հենց այդ չկա, վոր այստեղ ար-
դեն վոչ թե նա յե անարդար դեպի մեզ, այլ մենք՝ դեպի նա, վոր
մինչև այժմ նա պատրաստ էր Պլեխանովին ասելու՝ «տեսմը, ինչ
արիր, դե խրթիր, վոնց վոր բրդեցիր, յես ձեռներս լվանում եմ»,
իսկ այժմ ինքը սիրտ չի տնում, վորովհետև տեսնում է, վոր մենք

եւ անարդար վերաբերմունք ունենալ: Նրա հավաստիացումներն, իհարկեւ, քիչ ապավորութիւն թողին մեր վրա, և խեղճ Պ. Բ.-ն բողոքովին խղճուկ տեսք ունեւր, համազօլեւով, վոր մեր վորոշումն ամուր եւ:

Մենք միտասին յելանք և գնացինք Վ. Ի.-ին նախազգուշացնելու: Պետք էր սպասել, վոր նա «պառակտման» լուրը (չեւ վոր գործը հենց պառակտման տեսք էր ստանում) առանձնապէս ծանր կընդունի: Յես նույնիսկ վախենում եմ — առաջին որը Արսենյեֆն էր ասում — բողոքովին լրջորեն վախենում եմ, վոր նա ինքնուսպանութիւն գործի...

Յերբեք չեմ մոռանա վոգու այն վիճակը, վորով մենք յերեքով դուրս եյինք դալիս. «կարծես ննջեցյալի հետեից ենք գնում», ասացի յես ինձ ու ինձ: Յեւ իրոք, մենք ասես ննջեցյալի հետեից եյինք գնում, լուռ, հայացքներս դետին, վերին աստիճանի ճնշված՝ կորստի ծայրպատիճան անհեթեթութիւնով, վայրենութեամբ, անիմաստութեամբ: Ասես մի նզովք լինե՛ր: Ամեն ինչ դեպի լալն եր հարթվում — հարթվում եր այդքան յերկար ձախորդութիւններից ու անհաջողութիւններից հետո, — և հանկարծ հասաւ փոթորիկը — և վերջ, և ամեն ինչ նորից քանդվում եւ: Պարզապէս մի տեսակ չեյիք հավատում ինքդ քեզ (ճիշտ՝ ինչպէս չես հավատում ինքդ քեզ, յերբ զանվում ես մի մոտիկ մարդու մահվան թարմ տպավորութեան տակ) — միթե այդ յես, Պլեխանովի մոլի յերկրպագուն եմ այդպիսի չարութեամբ խոսում նրա մասին և, շրթունքներս պրկած, հոգու դիվական սառնութեամբ, գնում եմ նրան ասելու սառն ու սուր բաներ, հայտարարելու գրեթե «հարաբերութիւնների խզման» մասին: Միթե այդ վատ յերազ չեւ, այլ իրապիտութիւն:

Այդ ապավորութիւնը չեւ անցնում նաեւ Վ. Ի.-ի հետ խոսելիս: Նա առանձնապէս սուր չարատեսայտեց հոգմունքը, բայց նկատելի յեր, վոր սարսափելի ճնշված եւ, և համոզում եր, գրեթե ազալում, թե չի՞ կարելի թողոք՝ մեր վորոշումից հրաժարվենք, չի՞ կարելի արդոք փորձել, դուցե իրականում, այնպէս սարսափելի չեւ, աշխատանքի մեջ կհարթվին հարաբերութիւնները, աշխատանքի մեջ այնքան նկատելի չեն լինի նրա բնավորութեան վանող գծերը... Վերին աստիճանի ծանր էր այդ՝

լսել մի մարդու այդ անկեղծ խնդրանքները, վորը լիռույլ եր Պլեխանովի դիմաց, բայց անպայման անկեղծ և ջերմագին նվիր-ված ե գործին, մի մարդու, վորը Վարդուկի հերոսությամբ (Արսենյեվի արտահայտությունը) կրում ե պլեխանովականության լուծը: Այն աստիճան ծանր եր, վոր, աստված վկա, յերբեմն ինձ թվում եր, թե կիղձկամ... Յերբ ննջեցյալի հեակից ես գնում,— ամենից ավելի հեղտ ե փղձկալ այն դեպքում, յեթե սկսում եմ կարեկցության, հուսահատության խոսքեր խոսել...

Դուքս յեկանք մենք Պ. Բ.-ի և Վ.Ի.-ի մոտից: Դուքս յեկանք, ճաշեցինք, Դերմանիա նաժակներ ուղարկեցինք, թե այն-տեղ ենք գնում, թող մեքեման կազմեցեմն, նախախտ այդ մա-սին հեռագիր ուղարկեցինք. (միմչև Պլեխանովի հետ խոսելը), և մեզնից վոչ մեկի մեջ կտակած չշարժեց, թե պետք եր արդյոք այն, ինչ մենք անում եյինք:

Ճաշից հետո գնում ենք դարձյալ նշանակված ժամին Պ. Բ.-ի և Վ.Ի.-ի մոտ, վորոնց մոտ արդեն պետք ե լինել Պլեխանովը: Մեան նում ենք, նրանք յերեքով ել յեղնում են: Լուռ բարեկամ ենք—ի միջի ալոց Պլեխանովն աշխատում ե կողմնակի խոսակցություն անել (մենք Պ. Բ.-ին և Վ.Ի.-ին լենգրել էյինք նախազգուշացնել նրան, այնպես վոր նա ժամն ինչ գիտե)—վերադառնում ենք սենյակ և նստում: Արսենյեվն սկսում ե խոսել—զուտ, չոր ու հակիրճ, վոր մենք հույսներս կտրել ենք գործը տանելու հնարավորությունից այնպիսի հարաբերությունների ժամանակ, ինչպեսիք յերեկ վարդիցին, վոր վորոշել ենք Ռուսաստան գնալ՝ այնտեղի ընկեր-ների հետ խորհրդակցելու, վորովհետեւ վճիռք մեր վրա չենք վերցնում, վոր առայժմ հարկ ե լինում հրաժարվել ժառանգից: Պլեխանովը շատ հանդիստ ե, զուտ, ըստ յերեկույթին լիովին և անպայման իշխում ե իր վրա, Պավել Թորիսովիչի և Վերա Իվա-նովնայի նյարդայնությունից և վոչ մի հետք (այսպիսի իրար-անցումներ մեջ ե յեղել վոր, մտածում ենք չարությամբ, նա-յիով նրան): Նա հարցաքննում ե, թե բանն իսկապես ինչու ե «Մենք գտնվում ենք ուղիմատումների միջոցառում»—ասում ե Արսենյեվը և մի քիչ զարգացնում այդ միտքը:—Դուք ուրեմն վա-խենում եյիք, ինչ ե, թե յիս առաջին համարից հետո յերկրոր-դից առաջ ձեզ համար գործադուլ կսարքեմ,—հարցնում ե Պլե-

19396
II
38524
A
խանութիւն, նեղը զցելով մեզ: Նա կարծում էր, թե մենք սիրտ չենք
անի այդ ասելու: Բայց յետ ել ստանաւ հանգիստ պատասխանում
եմ. «այս տարբերութիւնն է արդոյք նրանից, ինչ Ա. Ն. անասց:
Ախր նա ել հենց այդ ասաց: Պլեխանովին, յերևում է, մի քիչ
անհամո յետ Նա այդպիսի տոն, այդպիսի շորութիւնն և մեղա-
դրանքի ուղղագիծութիւնն չեր սպասում:—«Դեհ, վորոշել եք
դնալ, ել բանն ինչո՞ւնն է,—ասում է նա,—յետ քան չունենալ այս-
տեղ ասելու, իմ դրութիւնը շատ տարբերակ է՝ ձերը՝ տպավո-
րութիւններ են, հա՛ տպավորութիւններ, ուրիշ վնչինչ: Դուք
այնպիսի տպավորութիւններ եք ստացել, թե յետ վատ մարդ եմ:
Դեհ, յետ ի՞նչ կարող եմ անել:—Մեր մեղքը դուցե՛ ասեն,—ասում
եմ յետ, ցանկանալով դրոյցը հեռացնել այդ «անհարկն» թե-
մայից,—վոր մենք չափից դուրս թափ ենք առել, առանց ծան-
ծաղուտը հետախուզելու:—«Վոչ, յեթե անկեղծորեն խոսելու լի-
նենք,—պատասխանում է Պլեխանովը,—ձեր մեղքն այն է, վոր
դուք (դուցե՛ դրա միջ արտահայտվեց Արսենյեվի նյարդայնու-
թիւնը ևս) չափից մեծ նշանակութիւն տվիք այնպիսի տպա-
վորութիւններին, վորոնց ընամ կարիք չկար նշանակութիւն
տալ: Մենք լսում ենք և հետո տեսնում, թե, այ, կարելի չէ առ-
այժմ բրոյշուրներով սահմանափակել: Պլեխանովը զայրանում
է. «յետ բրոյշուրների մասին չեմ մտածել և չեմ մտածում: Իմ
վրա հույս մի՛ դնեմ: Յեթե դուք մեկնում եք, ապա յետ չի՛ վոր
ձեռքերս ծալած չեմ մնա և կարող եմ մինչև ձեր վերադարձը
մի ուրիշ ձեռնարկութեան մեջ մտնել:»

Պլեխանովին իմ աչքում վնչինչ այնպես չգցեց, ինչպես
նրա այդ հայտարարութիւնը, յերբ յետ հետո հիշում եյի այն և
բազմակողմանի մտորում: Այդ մի աշխարհի կոպիտ սպանալիք
եր, այնպես վատ հաշիւի առած վախեցում, վոր միայն կարող էր
«խապառ կործանել» Պլեխանովին, մերկացնելով նրա «քաղաքա-
կանութիւնը» մեր վերաբերմամբ. իր մտածելով բազմակտն կլինի
մի լավ մեղ վախեցնել...

Բայց սպառնալիքին մենք ամենաանչիմ ուսադարձութիւն ան-
գամ չդարձրինք: Յետ միայն լուսթյամբ պրկեցի շրթունքներս.
այսինքն թե՛ լավ, դու տղա, դեհ, թող à la guerre comme à

la guerre *, ինչ հիմարն ես յեղել, յեթե չես տեսնում, վոր մենք
այժմ ա՛յն չենք ալիւս, վոր մենք մի գիլերվա ընթացքում բո-
լորովին վերածնվել ենք:

Յեւ ահա, տեսնելով, վոր սպառնալիքը չի ազդում, Պլե-
խանովը մի ուրիշ մտնյովը ե փորձում: Ինչպես հապա իրոք
մանյովը չանվանել, յերբ նա միքանի բոպե հետո, հենց այն-
տեղ, սկսեց խոսել այն մասին, թե մեղինց պառակտվելը իր հա-
մար հավասարազոր ե քաղաքական գործունեյությունից լիովին
հրաժարվելուն, թե ինքը հրաժարվում ե այդ գործունեյությունից
ե գիտական, դուռ-գիտական գրականության միջ կխորանա, վո-
րովհետեւ, իր ասելով, յեթե արդեն չի կարող մեզ հետ աշխատել,
ապա նշանակում ե, վոչ վոքի հետ չի կարող... Վախեցնելը չի
ազդում, ապա, գուցե, կեդծալորությունը կազդի... Բայց վա-
խեցնելուց հետո այդ կարող եր միայն վանող տալովորություն
գործել... Սոսակցությունը կարճ եր, բանը գլուխ չեր գալիս:
Պլեխանովը, այդ տեսնելով, զրույցը փոխեց Զինաստանում ուռա-
նեբի բանեցրած դաժանության վրա, բայց գրեթե ինքը մե-
նակ եր խոսում, և մենք շուտով բաժանվեցինք:

Պ. Բ.-ի և Վ. Ի.-ի հետ գրույցը, Պլեխանովի գնալուց հետո,
վոչ մի հետաքրքրական և հյական բան չեր: Պ. Բ.-ն պատեպատ
եր ընկնում, ջանալով մեզ ասպցուցել, թե Պլեխանովը նույն-
պես կտարված ե, թե այժմ մենք հոգու մեղք կանհնք, յեթե
այդպես գնանք, և այլն և այլն: Վ. Ի.-ն Արսենյեւի հետ մտերմա-
կան գրույցի մեջ խոստովանում եր, վոր «Ժորժը» միշտ այդ-
պիսին եր, խոստովանեց իր «ստորուկի հերոսությունը», խոստովա-
նեց, վոր «այդ իրեն համար դաս կլինի», յեթե մենք գնանք:

Յերեկոյի մնացորդն անցկացրինք դատարկ, ծանր:

Մյուս օրը, յերեքշաբթի, ն. տ. ոգոստոսի 28-ին, պետք ե
Ժընեւ գնալ, իսկ աճառեղից՝ Գերմանիա: Առավոտը վաղ ինձ
զարթեցնում ե (սովորաբար ուշ վերկացող) Արսենյեւը: Յես զար-
թանում եմ. նա ասում ե, թե վատ եր քնել, և վոր վերջին հնա-
կար կովերնացիան ե մտածել, վորպեսզի գեթ մի կերպ շտկի
վորպեսզի թույլ չտա, վոր ամենակամ հարաբերությունների

պայմանագրում թող ըստ պատերազմականի լինի լսվը.

Հայաստանի
Կոմիտեի
Գրասենյակ

վատանալու ալատճառով կորչի կուսակցական լուրջ ձեռնարկու-
թյունը: Հրատարակենք մի ժողովածու, — մի բան վոր նյութն
արդեն նշված է, տարածանի հետ կապը գլուխ բերած: Ժողովա-
ծու հրատարակենք առայժմ ներկայիս խմբագրական անորոշ
հարաբերություններով, իսկ հետո կտեսնենք. ժողովածուից հետո
միանման հեշտ է թե Ժուրնալին և թե բրոշյուրներին անցնելը:
Իսկ յիթե Պլևանովը համառի, — ապա քարը գլուխը, մինք կգի-
տեսանք, վոր արինք այն ամենը, ինչ կարող էյինք... Վճոված է:

Գնում ենք հաղորդելու Պաղեյ Բորխովիչին և Վերա Իվո-
նովնային և հանդիպում ենք նրանց. նրանք մեզ մոտ էյին գա-
լիս: Նրանք, իհարկե, հաճույքով համաձայնում են, և Պ. Բ.-ն
հանձնարարություն է ստանձնում բանակցելու Պլեխանովի հետ և
նրան հորդորելու, վոր համաձայնի:

Դալիս ենք Ժընեվ և Պլեխանովի հետ ունենում վերջին գը-
րայքը: Նա այնպիսի տոն է ընդունում, ասես թե մի ախուր
թյուրիմացություն է յեղել նյարդայնության հոգի վրա: Արան-
յելին կտրեկցաբար հարցնում է նրա առողջության մասին և գրե-
թե գրկում է նրան — նա քիչ է մնում հեռ ջատկի: Պլեխանովը
ժողովածուին համաձայնում է. մենք ասում ենք, թե խմբագրո-
ւան գործի կազմակերպման հարցում յերեք կոմբինացիա յեն
հնարավոր (1. մենք խմբագիր, նա — աշխատակից. 2. մենք ա-
մենքս խմբագրակիցներ ենք. 3. նա խմբագիր է, մենք՝ աշխա-
տակիցներ), թե մենք Ռուսաստանում կընենք այդ յերեք կոմ-
բինացիաները, նախագիծ կմշակենք և կըբերենք այստեղ: Պլեխա-
նովը հայտարարում է, թե ինքը վճռականապես հրաժարվում է
3-րդ կոմբինացիայից, վճռականապես այդում է, վոր բոլորո-
վին դուրս գցվի այդ կոմբինացիան, իսկ առաջին յերկու կոմբի-
նացիային էլ նամաձայնում է: Այդպես՝ ել վճռեցինք, առայժմ, միև-
չեմ մեք՝ խմբագրական մեր ռեժիմի մախազիժը մերկայացնելը, թող-
նում ենք հին կարգը (բալթ վեցս էլ խմբագրակիցներ ենք, Պլեխա-
նովն էլ 2 ձայն ունի):

Հետո Պլեխանովը ցանկություն է հայտնում մի լավ տեղե-
կանալ, թե ինչու ենք իրոք բանը, ինչով ենք մենք անբավ-
կան: Յես նկատում եմ, թե գուցե ավելի լավ կլինի, յիթե ավե-
լի ուղադրություն դարձնենք նրան, ինչ լինելու յե, և վոչ թե

նրան, ինչ կար: Բայց Պլեխանովը պնդում է, թե եխը պետք է
 պարզել, քննել: Ջրույց է սկսվում, վորին մասնակցում ենք գրե-
 լիս միայն Պլեխանովն ու յես—Արանյանին ու Պ. Բ. լուում են:
 Ջրույցը տարվում է բավական հանդիստ, նույնիսկ ըտրոտիին
 հանդիստ Պլեխանովին ասում է, թե ինքը նկատեց, կարծես Ար-
 սենյանին գրգռել եր Ստրուվեյին վերաբերյալ իր հրաժարումը,—
 յես նկատում եմ, վոր նա, ընդհակառակը, մեղ պայմաններ եր
 դնում—հակառակ իր նախկին հայտարարությանը՝ անտառում,
 թե պայմաններ չի դնում: Պլեխանովը պայտպանվում է. իր աս-
 ելով՝ լուում եր վոր թե նրա համար, վոր պայմաններ եր դնում,
 այլ վորովհետև իր հաժար հարցը պարզ եր: Յես խոսում եմ բա-
 նավեմ թուլլատրելու անհրաժեշտության մասին, մեր միջև
 քվեարկության անհրաժեշտության մասին—Պլեխանովը թույլ է
 տալիս վերջինը, բայց ասում է՝ մասնավոր հարցերում, իհարկե,
 քվեարկություն, հիմնականներում՝ անհնարին է: Յես առարկում
 եմ, թե հիմնական և մասնավոր հարցերի սահմանադատումը միշտ
 ել հնդտ չի լինի, թե հենց այդ սահմանադատման մասին անհր-
 րաժեշտ կլինի քվեարկություն տնել խմբագրակիցների միջև:
 Պլեխանովը դեմ է ընկնում, ասում է, թե այդ արդեն խզնի հարց
 է, թե հիմնական ու մասնավոր հարցերի միջև տարբերությունը
 պարզ բան է, թե այստեղ քվեարկելու բան չկա: Այդ վեճի
 վրա ել—քվեարկություն թուլլատրելի յն արդյոք խմբագրակից-
 ների միջև հիմնական ու մասնավոր հարցերի սահմանադատման
 հարցում—մենք մտցինք, վոր մի քայլ առաջ չգնալով: Պլեխա-
 նովը դրսևորեց իր ամբողջ ճարպկությունը, իր որինակաների, հա-
 մեմատությունների, կատակների ու ցիտատների ամբողջ փայլը,
 վորոնք ակամայից հարկադրում են ծիծաղել, բայց այդ հարցն
 այնպես ել կոծկեց, ուղղակի չասելով՝ վոր: Իմ մեջ համոզում գո-
 յացավ, վոր նա զիջել էր կարող հենց այստեղ, այս կետում, չեր կա-
 րող հրաժարվել իր «ինդիվիդուալիզմից» և իր «ուլտիմատումնե-
 րից», վորովհետև նա նման հարցերում չեր կարող քվեարկել,
 այլ կարող եր հենց ռւտիմատումներ դնել:

Յես նույն որը յերեկոյան մեկնեցի, «Աշխատանքի ազա-
 տագրում» խմբից ել վոր վորքի հետ չտեսակցած: Մենք վորոշեցինք
 անցած դարձածի մասին վոր վորքի չպատմել, ամենամոտիկ անձերից

դատ,—վերոշնչինք վայելուչ տեսք պահպանել,—հակառակորդ-ներին հրճվել չտանք: Արտաքուստ՝ իբրև թե վոչինչ չի պատա-հել, ամբողջ մեքենայն պետք և շարունակի ընթացքը, ինչպես վոր կար,—միայն ներսում ինչ-վոր մի լար կտրվեց, և անձնա-կան գեղեցիկ հարաբերությունների փոխարեն հասան գործային-ները, չորերը, մշտական հաշվով՝ ըստ si vis pacem, para bellum * ֆորմուլայի:

Անհետաքրքրական չե միայն նշել այդ նույն որովա յերե-կոյան մի խոսակցությունը, վոր յես ունեցա Պլեխանովի մերձա-վորագույն ընկեր և կողմնակից՝ «Սոցիալ-դեմոկրատ» խմբի մի անդամի հետ: Յես նրան կատարվածի մասին վեչ մի խոսք չասացի, ասացի, թե ժուրնալը նշված ե, հոգւածները նշանակ-ված են—ժամանակ ե գործի անցնելու: Զրուցում եյի նրա հետ այն մասին, թե ինչպես գործնականորեն շտկել գործը. նա ամ-բողջապես այն կարծիքն եր հայտնում, թե ծերերը վճռականա-պես անընդունակ են խմբագրական աշխատանքի: Զրուցում եյի «Յ կոմերնացիայի» մասին, և ուղղակի հարցրի նրան՝ իր կար-ծիքով ամենից լավը վժիրն ե: Նա ուղղակի և առանց տատանվելու պատասխանեց՝ առաջինը (մենք խմբագիր ենք, նրանք՝ աշխա-տակից), ըսյց, իր ասելով, հավանական ե, վոր ժուրնալը Պլե-խանովինը լինի, իսկ որաթերթը՝ մերը:—

—Քանի մենք հեռանում եյինք տեղի ունեցած պատմու-թյունից, սկսեցինք նրան ավելի հաճիստ վերաբերվել և զալ այն համոզման, թե գործը լքելը ընամ հաշիվ չե, թե մենք ու-այժմ հիմք չունենք վախենալու (ժողովածուի) խմբագրմանը ձեռ-նամուկ լինելուց, իսկ անհրաժեշտ ե, վոր հենց մենք ձեռնամուկ լինենք, վորովհետև այլապես վոչ մի հնարավորություն չկա հա-կադրելու, վոր մեքենան կանոնավոր աշխատի, և թույլ չա-սու, վոր գործը կործանվի Պլեխանովի կազմալուծող «հատկու-թյունների» յերեսից:

N¹² հասնելուց հետո, սեպտեմբերի 4 կամ 5-ին, մենք արդեն մշակեցինք մեր միջև լինելիք ձևակազմ հարաբերություն-

*—Եթե խաղաղություն ես ցանկանում, պատերազմ պատրաստի-ր թուր:

ների նախագիծը (յես այդ նախագիծն սկսեցի գրել դեռ ճանապարհին, յերկաթուղային վագոնի մեջ), և այդ նախագիծը ¹⁸ դարձնում եր մեզ՝ խմբագիրներ, նրանց՝ աշխատակիցներ՝ խմբագրական՝ բոլոր հարցերում ձայնի իրավունքով։ Այդ նախագիծն ել հենց վերոշված եր քննարկել Յեգորի (Մարտովի) հետ միատեղ, իսկ հետո հրամցնել նրանց։

Կայծն սկսեց հուլյս տալ նորից բոցավառվելու։

«ԱՏԿՐԱ»-ՅԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ¹⁴

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ

Ձեռնարկելով քաղաքական որակերից «ԱՏԿՐԱ»-յի հրատարակմանը, մենք անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել այն մասին, թե ինչին ենք ձգտում և ինչպես ենք հասկանում մեր խնդիրները:

Մենք Հալիպոլոսի կարևոր մոմենտ ենք ապրում ռուսական բանվորական շարժման և ռուսական սոցիալ-դեմոկրատիայի պատմության մեջ: Վերջին տարիները բնորոշվում են սոցիալ-դեմոկրատական գաղափարների զարմանալի աճի և տարածումով մեր ինտելիգենցիայի շրջանում, իսկ հասարակական մտքի այդ հոսանքին ընդառաջ գնում և արդյունաբերական պրոլետարիատի ինքնուրույնաբար ծագած շարժումը, պրոլետարիատի, ժողովրդի սկզբում և միավորվել և պայքարել իրեն ճնշողների դեմ, սկսում և ազահաբար ձգտել դեպի սոցիալիզմ: Բանվորների և սոցիալ-դեմոկրատ ինտելիգենտների խմբակները յերևան են գալիս ամենուրեք, տարածվում են տեղական ազդեցություն թերթիկներ, աճում և սոցիալ-դեմոկրատական գրականության պահանջը, շատ առաջ անցնելով առաջարկից, իսկ կառավարական ուժեղացրած հետապնդումներն անկարող են այդ շարժումը զսպելու: Բանտերը լեփ-լեցուն են, լիքն են աքսորավայրերը, գրեթե ամեն տեղ լսում ենք Ռուսաստանի բոլոր անկյուններում տեղի ունեցող «խափանումների» մասին, տրանսպորտների բռնակցում մասին, գրականության ու տպարանների կոնֆիսկացիայի մասին, բայց շարժումը գնալով աճում է, քանի գնում ավելի մեծ շրջան և բռնում, ավելի խորն և թափանցում բանվոր դասակարգի մեջ,

ավելի շատ և զբաղվում հասարակական ուշադրությունը: Յեւ Ռուսաստանի տնտեսական ամբողջ զարգացումը, ռուսական հասարակական մտքի և ռուսական հեղափոխական շարժման ամբողջ պատմությունը յերաշխավորում են, վոր սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժումը կաճի, չնայած բոլոր խոչընդոտներին, և վերջիվերջո կհաղթահարի դրանց:

Բայց, մյուս կողմից, մեր շարժման գլխավոր գիծը, վոր առանձնապես աչքի յե ընկնում վերջին ժամանակ,—նրա բաժանաժամանությունն է, նրա, այսպես ասած, տնայնագործ բնույթը. տեղական խմբակները առաջ են դալիս և գործում են միմյանցից անկախ և նույնիսկ (վոր հատկապես կարևոր է) անկախ այն խմբակներից, վորոնք գործել են և գործում են նույն կենտրոններում. տրագիցիա չի սահմանվում, չկա հաշորդականություն, և տեղական զբաղանքությունն ամբողջովին արտացոլում է կոտորակվածություն և կապի բացակայություն այն բանի հետ, ինչ արդեն ստեղծել է ռուսական սոցիալ-դեմոկրատիան:

Այդ կոտորակվածության անհամապատասխանությունը շարժման ուժի ու լայնության առաջ բերած պահանջներին՝ նրա զարգացման մեջ, մեր կարծիքով, կրիտիկական մոմենտ է ստեղծում: Բուն իսկ շարժման մեջ անդուստ ուժով դրսևորվում է ամբապնդվելու, վորող կառուցվածք ու կազմակերպություն մշակելու պահանջը, այնինչ պրակտիկորեն գործող սոցիալ-դեմոկրատները շրջանում դեպի շարժման ավելի բարձր ձևն այդպիսի տնցում կատարելու անհրաժեշտությունը ամեն տեղ ել չի գիտակցվում յերբեք: Բավականին լայն շրջաններում, ընդհանրապես, նկատվում է մտքի տատանում, մոդայական «մարքսիզմի քննադատությունով» ու «բերնշտայնիստայով» տարվելը, այսպես կոչված «եկոնոմիստական» ուղղության հայացքների առաջում և դրա հետ անքակտելիորեն կապված՝ ձգտում՝ շարժումը կանգնեցնելու նրա ամենացած միւլում, ձգտում՝ յերկրորդ պլանի վրա հետ քաշելու ամբողջ ժողովրդի գլուխն անցած՝ պայքար մղող հեղափոխական կուսակցության կազմակերպումը: Վոր մտքի այս տեսակի տատանում նկատվում է ռուսական սոցիալ-դեմոկրատները շրջանում, վոր շարժումն իր ամբողջությամբ թնորեալիկորեն լուսաբանելուց կարված նեղ պրակտիցիզմը սպառնում է շարժումը

մը շեղելու դեպի սխալ ուղի, այդ փաստ է. դրա մասին չեն կարող հասկածել այն մարդիկ, վորոնք անմիջականորեն ծանոթ են գործերի դրուժյանը մեր կազմակերպությունների մեծածափանակության մեջ: Յե՛մ կան ել դրական յերկեր, վորոնք հաստատում են այդ. բաժանան ե անվանել միայն «Credo»-ն, վորն արդեն յիտլին որինական ըողոք ե հարուցել, «Одельное приложение к Рабочей мысли» (սեպտեմբեր 1899), վորն այնքան ցայտուն արտահայտել ե ամբողջ «Рабочая мысль» որաթերթը թափանցող տենդենցը, կամ վերջապես՝ Պետերբուրգի «Բանվոր դաստիարակի ինքնադաստագրման խմբի»¹⁵ կոչը, վորը հենց նույն «եկոնոմիզմի» վոգուդ ե կարմված: Յե՛մ բոլորովին սխալ ե «Рабочее дело»-յի¹⁶ պնդումը, թե «Credo»-ն ավելին չե, քան յեթե անհատ անձերի կարծիքը, թե «Рабочая мысль»-ի ուղղությունը արտահայտում ե միայն նրա խմբագրության դատարկամտությունն ու անտակաությունը, և վոչ թե ուսական բանվորական շարժման բուն խի ընթացքում հատուկ ուղղություն:

Իսկ դրա կողքին այն գրողների յերկերում, վորոնց ընթերցող հասարակությունը, ավելի մեծ, թե ավելի փոքր հիմունքով, մինչև այժմ համարում եր «լեզու» մարքսիզմի ականաժող ներկայացուցիչներ, ավելի ու ավելի դարձ ե յերևան գալիս դեպի բուրժուական ջատագովականությանը մոտեցող հոյացքները: Այդ բոլորի հետևանքն ել հենց այն խառնափնթորությունը ե այն անարխիան ե, վորոնց շնորհիվ եքս-մարքսիստ կամ, ավելի ճիշտ, եքս-սոցիալիստ Բերնշտայնը, թվելով իր հաջողությունները, կարող եր, առանց առարկությունների հանդիպելու, տպագրեր հայտարարել, իբր թե Ռուսաստանում գործող սոցիալ-դեմոկրատների մեծածափանակությունը իր հետևադնորից ե կազմված:

Մենք չենք ցանկանում չափազանցել դրության վտանգավորությունը, բայց նրա հանդեպ աչք փակելը անչափ ավելի վտանգավոր կլինե՞ր. ահա թե ինչու մենք ամբողջ հոգով վողչունում ենք «Աշխատանքի ազատագրում» խմբի վորոշումը իր դրական գործունեյությունը վերանորոգելու մասին ե սոցիալ-դեմոկրատիզմը խեղաթյուրելու ե զոհեկացնելու վործերի դեմ սխառածառիկ պայքար սկսելու մասին:

Այդ բոլորից գործնական հետևությունն այս է. մենք, ուս

սոցիալ-դեմոկրատներս, պետք է համախմբվենք և բոլոր ջանքերս ուղղենք ուժեղ կոուսակցություն կազմելու, վորը պայքարում է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի միասնական դրոշի տակ: Հենց այդ խնդիրն եր նշել գեուկս 1898 թ. համագումորը, վորը կազմել եր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանավորականկոուսակցությունը և հրապարակել եր նրա «Մանիֆեստը»:

Մենք մեզ ճանաչում ենք այդ կոուսակցության անդամներ, լինվին համամիտ ենք «Մանիֆեստի» հիմնական դադարներներին և կարևոր նշանակություն ենք տալիս նրան, իբրև կոուսակցության նպատակներ թացահայտ հայտարարության: Ուստի մեզ իբրև կոուսակցության անդամներ համար՝ մեր մերձավորագույն և անմիջական խնդրի հարցը դրվում է այսպես. մենք գործունեյության լինչպիսի պլան պետք է ընդունենք, վորպեսզի կոուսակցության ըստ հնարավորության ավելի ամուր վերանորոգման հասնենք:

Այս հարցի սովորական պատասխանն տյն է, թե անհրաժեշտ է նորից ընտրել կենտրոնական հաստատությունը և նրան հանձնարարել վերանորոգել կոուսակցության որդանը: Բայց խառնափնթորումի մեր ասլրած ժամանակաշրջանում այդպիսի հասարակ ճանապարհը դժվար թե նպատակահարմար լիներ:

Ստեղծել և ամրացնել կոուսակցությունը՝ նշանակում է ստեղծել և ամրացնել ուսական բոլոր սոցիալ-դեմոկրատներին միավորումը, իսկ վերը նշված պատճառներով այդպիսի միավորումը չի կարելի գեղընտադրել, այն չի կարելի մտցնել մի վորևե, տեսնք, ներկայացուցիչների ժողովի վորոշումով միայն, այն անհրաժեշտ է մշակել: Անհրաժեշտ է, նախ, մշակել գաղափարական ամուր միավորումը, վորը թացաուեր այն տարբերաձայնությունը և խառնաշփոթությունը, վորը,—անկեղծ լինենք,—ներկայումս թագավորում է ուսական սոցիալ-դեմոկրատներին շրջանում. անհրաժեշտ է այդ գաղափարական միավորումն ամրապնդել կոուսակցական ծրագրով: Անհրաժեշտ է, յերկրորդ, մշակել մի կազմակերպություն, վոր հատկապես նվիրված լինի շարժման բոլոր կենտրոններին միջև յեղած հարաբերություններին, շարժման մասին լրիվ ու իր ժամանակին տեղեկություններ հասցնելուն և Ռուսաստանի բոլոր ծայրերին կանոնավորապես պարբերական մա-

մուլ մատակարարելուն: Միայն այն ժամանակ, յերբ կմշակվի աղբյուրի կազմակերպություն, յերբ կստեղծվի ռուսական սոցիալ-լիստական փոստը, կուսակցությունը կստանա հաստատուն դոյություն և կդառնա ռեալ փաստ, հետևաբար և քաղաքական հզոր ուժ: Այդ խնդրի առաջին կետին, այսինքն մի ընդհանուր, սկզբունքորեն առկուն զրահանություն մշակելուն, վոր ընդունակ լինի գաղափարապես միավորել սոցիալ-դեմոկրատիան, մենք ել մտադիր ենք նվիրել մեր ուժերը, դրանում տեսնելով ժամանակակից շարժման կենսական պահանջը և նախապատրաստական տնհրաժեշտ քայլը դեպի կուսակցություն դործունեյություն վերանորոգումը:

Ինչպես արդեն ասել ենք, ռուսական սոցիալ-դեմոկրատների գաղափարական միավորումը դեռևս պետք է մշակել, վորի համար անհրաժեշտ և, մեր կարծիքով, ժամանակակից «եկոնոմիստներին», բերնշտայնականներին և «քննադատներին» հարուցած սկզբունքային և տակտիկական հիմնական հարցերի բացահայտ և բազմակողմանի քննարկում: Նախքան միավորվելը և միավորվելու համար մենք պետք է սկզբից վճառականորեն և վերոշակի առամանադժվենք: Այլապես մեր միավորումը դոյություն ունեցող խառնափնթորությունը ջողարկող և նրա արմատական վերացմանը խանգարող ֆիկցիա կլինի լսի: Ուստի հասկանալի է, վոր մենք մտադիր չենք մեր որդանը դարձնելու տարակերպ հայացքների մի պահեստ: Մենք այն, ընդհակառակը, կտանենք խստորոշ ուղղություն վորով, Այդ ուղղությունը կարող և արտահայտվել մարքսիզմ բառով, և դժվար թե հարկ լինի մեզ ավելացնելու, թե մենք կողմնակից ենք Մարքսի և Ենգելսի գաղափարները հետևողականորեն դարգացնելուն և վճառականորեն ժխտում ենք այն կիսատ-պատ, ճապաղ ու ուղորտունխատական ուղղումները, վոր այժմ այնպես մողայական են դարձել Նդ. Բերնշտայնի, Պ. Մորուվեյի և ուրիշ շատերի շնորհիվ: Բայց, բոլոր հարցերը քննարկելով մեր վորոշ տեսակետով, մենք բնավ չենք ժխտում մեր որդանի եջերում բանավեճը ընկերների միջև: Ռուսական բոլոր սոցիալ-դեմոկրատների և գիտակից բանվորների առջև բացահայտ բանավեճն անհրաժեշտ է և ցանկալի՝ պարզելու համար դոյություն ունեցող արաձայնությունների

խորուժյունը, բազմակողմանի քննարկելու համար վիճելի հարցերը, պայքարելու համար այն ծայրահեղություններն դեմ, վորոնց մեջ անխուսափելիորեն ընկնում են վոչ միայն տարբեր հայացքների ներկայացուցիչները, այլ նույնիսկ տարբեր վայրերի կամ հեղափոխական շարժման տարբեր «պրոֆեսիաների» ներկայացուցիչները: Մենք նույնիսկ, ինչպես արդեն վերը նկատվեց, ժամանակակից շարժման թերություններից մեկը համարում ենք բացահայտ բանավեճի բացակայությունը ակնհայտ տարամետվող հայացքների միջև, շատ լուրջ հարցերի վերաբերող տարաձայնությունները անհայտ պահելու ձգտումը:

Մենք մանրամասն չենք թվի այն հարցերն ու թեմաները, վորոնք մեր որդանի ծրագրի մեջ են մտնում, վորովհետև այդ ծրագրին ինքնին բղխում է ընդհանուր հասկացողությունից այն մասին, թե ինչ պետք է լինի, տվյալ պայմաններում, հրատարակվող քաղաքական որաթերթը:

Մենք մեր ուժերը ներածին չափ կձգտենք, վորպեսզի ուսական բոլոր ընկերները մեր հրատարակությանը նայելին իբրև իրենց որդանին, վորին յուրաքանչյուր խումբ հաղորդեր շարժման մասին բոլոր տեղեկությունները, վորին նա (խումբը) բաժին հաներ իր փորձից, իր հայացքներից, դրականությանն ուղղած իր պահանջներից, սոցիալ-դեմոկրատական գրականության իր գնահատականից, բաժին հաներ, մի խոսքով, այն ամենից, ինչ ինքը շարժման մեջ է մտնում և ինչ նրանից նա դուրս է բերում: Միայն այդ պայմանով հնարավոր կլինի ստեղծել իսկապես համառուսական սոցիալ-դեմոկրատական մի որդան: Միայն այդպիսի որդանն է ընդունակ շարժումը դուրս բերելու քաղաքական պայքարի լայն ուղին: «Լայնացնել մեր պրոպագանդիստական-ազդեցություն և կազմակերպական գործունեություն շրջանակները և ընդլայնել բովանդակությունը»—Պ. Բ. Ակսելրոդի այս խոսքերը պետք է դառնան մատուցող ապագայում ուսական սոցիալ-դեմոկրատների գործունեությունը վորոշող լոզունգը,—և մենք այդ լոզունգն ընդունում ենք մեր որդանի ծրագրի մեջ:

Մենք սեր կոչն ուղղում ենք վոչ միայն սոցիալիստներին և զիսակից բանվորներին: Մենք կոչ ենք անում նաև բոլորին,

ուժ ճնշում ու նեղում և ժամանակակից քաղաքական կարգը, մենք նրանց մեր հրատարակութունները եջերն ենք առաջարկում ռուսական խնդրակալության բոլոր դարչնությունները մերկացնելու համար:

Ով սոցիալ-դեմոկրատիան հասկանում և իբրև մի կազմակերպություն, լորը ծառայում և բացառապես պրոլետարիատի տարերային պայքարին, նա կարող և բավարարվել միայն ահադական ազդեցությանը և զոհաբերական զրահանությունով: Մենք այդպես չենք հասկանում սոցիալ-դեմոկրատիան. մենք այն հասկանում ենք իբրև արսույուսիզմի դեմ ուղղված հեղափոխական կոսակցություն, լոր անխզելիորեն կապված և բանվորական շարժման հետ: Միայն կազմակերպված և այդպիսի կոսակցություն կազմող պրոլետարիատը, ժամանակակից Ռուսաստանի այդ ամենից ավելի հեղափոխական դասակարգը, ի վիճակի կլինի կատարելու իր վրա ընկած պատմական խնդիրը՝ իր դրոշի տակ միավորել յերկրի բոլոր դեմոկրատական տարրերը և ատելի ռեժիմի վրա տարած վերջնական հաղթանակով ավարտել մի ամբողջ շարք կորած սերունդների համառ պայքարը:

**

Որոշելով լույս կոեսնի համարը 1—2 տպագրական թերթի ծավալով:

Լույս ընծայվան ժամկետը, ռուսական անլեզու մամուլի պայմանները շնորհիվ, առաջուց չի վորոշվում:

Մեզ խոստացված են՝ միջազգային սոցիալ-դեմոկրատիայի միջանի ակնառվոր ներկայացուցիչների աշխատակցությունը, «Աշխատանքի ազատագրում» խմբի (Գ. Վ. Պլեխանովի, Պ. Բ. Ալեքսևրովի, Վ. Ի. Զասուլիչի) ամենամոտիկ մասնակցությունը և Ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կոսակցության միջանի կազմակերպությունների, նույնպես և ռուսական սոցիալ-դեմոկրատների առանձին խմբերի ոժանդակությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Искра» — սոցիալ-դեմոկրատական որաթերթ, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի դեկլարացիոն ծրագրան էր 1900—1903 թթ. ժամանակաշրջանում, Հիմնադ. է Լենինի նախաձեռնությամբ, վերին որաթերթում պատկանում էր զաղափարական դեկլարացիոն և պրակտիկ կադմակերպչի դերը, խմբագրվում էյին Վ. Ի. Լենինը, Գ. Վ. Պլեխանովը, Յու. Ո. Մարտովը, Պ. Բ. Ակսելրոդը, Ա. Ն. Պոտրեսովը և Վ. Ի. Զասուլիչը:

«Պակովի խորհրդակցությունը» վերջանալուց հետո Պոտրեսովը, համաձայնում էր իր զարմի Լենինի հետ, խնդրյն մեկնեց Գերմանիա՝ գերմանական սոցիալ-դեմոկրատներին հետ ըմբռնեցելու գերմանական ս.-դ. ապարաններեց մեկում «Искра»-ն անլեզու հրատարակելու մասին: Լենինի զարուց հետո Շվեյցարիայում, Գորայիում (Ժընևի մոտ) 1900 թ. ոգոստոսին կայացավ Լենինի ու Պոտրեսովի խորհրդակցությունը «Այնտանքի աղատադրում» խմբի անդամներին հետ, վոր նվիրված էր հրատարակության ծրագրին հաղցին և խմբագրության կադմակերպմանը: Խորհրդակցությունը քիչ էր մնում վերջանալ պոռակտումով և ամբողջ ձևանարկության տապալումով (տես «Թե ինչպես քիչ էր մնում, վոր «Искра»-ն հանդիսի»): Լենինից և Պոտրեսովից Պլեխանովի անըմակալան լինելու աղբյուրներեց մեկը նրանց հաստատ մտադրությունն էր՝ «Искра»-ն հրատարակել վոչ թե Շվեյցարիայում, Ժընևում կամ Յյուրիխում, վորտեղ խմբի անդամներն էյին աղբում, այլ Գերմանիայում: Այդ մտադրությունը թնադրողը «Искра»-յի խմբագրութանը «Ժերերեց» հնարավորության չտի անկախ դարձնելու ցանկությունն էր, «Ժերեր», վորտեղ անմիջական կապը չունելին Ռուսաստանի հեղափոխական շարժման հետ և չէյին ըմբռնում վերջին պրակտիկ կարեքները: «Իսկրայականները» պնդեցին իրենցը, և «Искра»-ն սկսեց հրատարակվել Գերմանիայում, սկզբում Լայպցիգում, հետո Մյունխենում, վերջապես, Շտուտգարտում, սոցիալ-դեմոկրատական հայտնի հրատարակիչ Դիցել (J. H. Dietz, 1834—1922) տապալում: Խմբագրությունը, ափիլի ճիշտ՝ նրա հիմնական միջուկը (Լենինը, 1901 թ. դարնանը յեկած Մարտովը, Պոտրեսովը և Զասուլիչը), դանվում էր Մյունխենում, Պլեխանովը աղբում էր Ժընևում Ակսելրոդը՝ Յյուրիխում: «Искра» յի դոյության ամբողջ ընթացքում նրա խմբագրությանը գրեթե վոչ մի անգամ չհաջողեց ամբողջ կադմով հաղաքելու: Ձեռագրերը նայելու համար խմբագրության բոլոր անդամներին ուղարկելու անհրամեղությունը քիչ չէր դժվարացնում «Искра»-յի խմբագրական գործերը:

տանկերը 1902 թ. սկզբում գերմանական վոստիկանութունը ուսական ոխրան-
կայի գործակալները ոժանդակութեամբ դատով Գերմանիայում գոյութուն
ունեցող «Իսկրայական» անկեղալ կազմակերպութեան հետքերը և անվանումից
յերկյուզ կրելով, «Искра»-յի խմբագրութունը, գերմանական սոցիալ-դեմո-
կրատները խորհրդով, վորոշեց թողնել Գերմանիան և 1902 թ. ապրիլին անցավ
Լոնդոն, իր կազմում՝ Լենինը, Մարտով և Ջառուլինը, հակառակ Պլեխանովի
և Ալեքսեյևի տնդումներին, վորոնք խմբագրութեանն առաջարկում էին
հիմնադրուիլ Շվեյցարիայում։ Մի տարի անց, 1903 թ. դարնանը, «Искра»-յի
հրատարակութունը փոխադրվեց Փրնկի։

«Искра»-ն ծագեց իբրև հետևանք յերկու բլոկի՝ ուսական սոցիալ-
դեմոկրատների խմբի (Լենին, Մարտով, Պարեհով) և Ալեքսեյևի ազա-
տագրումը արտասահմանյան խմբի (Պլեխանով, Ալեքսեյև, Ջառուլին)։ Սյգ
բաժանումը յերկու խմբի, վորոնցից մեկի «Երեքը» Լենինն էր, իսկ մյուսի
«Երեքը»՝ Պլեխանովը, շարունակում էր «անպաշտոն» մնալ նաև ընդհանուր
խմբագրութեան ներքում, յերևան դալով մի շարք ծրագրային, տակտիկական և
կազմակերպական տարաձայնութունների մեջ Լենինի ու Պլեխանովի միջև,
ընդվորում քվեարկութունը հաճախ հասցնում էր խմբագրութեան՝ յերկու
հալասար մասի բաժնվելուն՝ Յ և Յ։ Ստեղծված դրութունը վ. Իլյիչին և իր
համակոններին խանդալում էր իրենց գլխին անցկացնել առանց ավելորդ բաղ-
խումներ և քաղաքական և անդադառնում էր «Искра»-յի աշխատանքներին
հաղորդեալն վրա՝ Ուստի և վ. Իլյիչը հարկադրված էր (1903 թ. յերկրորդ
կեսում) հարց դնել խմբագրութեան կաղմը փոփոխելու մասին՝ սկզբում այն
ընդարձակելու մինչև 7 մարդ, «Искра»-յի մեջ մտցնելով Լ. Գ. Տրոցկուն,
վորին Լենինը հիմք ունեւր այդ ժամանակաշրջանում, համագումարից առաջ,
իր համակոնը համարելու (այդ առաջարկը մեղմից Պլեխանովի հակառակվելու
ընդդիմ)։ ավելի ուշ, յերկրորդ համագումարում՝ խմբագրութունը կրճատելու
(նեղացնելու) մասին մինչև 3 մարդ (Լենին, Պլեխանով, Մարտով)։ «Искра»-յի
ներքում յեղած տարաձայնութուններից, վորոնք ժամանակ առ ժամանակ
հասնում էին աչքի ընկնող սրութեան և յերբեմն խզման ու պառակտման
սպառնալիք էին ստեղծում, կարելի չէ հետեյալները նշել։ «Искра»-յի խնդր-
ներին ձևակերպումը, «Искра»-յի հրատարակման տեղի հարցը, վերաբերմունքը
դեպի Լենինին «Ջեմատովայի հալածիչները և լեբերայիզմի չանհրաւնները» հոդ-
վածքը, կուսակցութեան ծրագրերը, վերաբերմունքը դեպի Լենինին «Ռուսական
սոցիալ-դեմոկրատայի ազարային ծրագրերը» հոդվածը, «Искра»-յին դու-
գանեա սոցիալ-դեմոկրատական «Южный рабочий» որաթերթի գոյութուն
ունենալու հարցը, ցույցերի հարցը Դրականութեան մեջ բոլորովին չի պարզված
միջանի տարաձայնութունների բնույթը (որինանձ ցույցերի հարցում)։

«Искра»-յի քարտուղարն սկզբնապես Բ. Գ. Մմիդովին էր («Գրիմա»),
1901 թ. ապրիլից մինչև պառակտումը և խմբագրութունից Լենինին դուրս գալը
(1903 թ. նոյեմբեր)՝ Ն. Կ. Կրուպսկայան, վորը վաբում էր նույնպես
«Искра»-յի ամբողջ նամակագրութունը ուսական սոցիալ-դեմոկրատական

կազմակերպութիւնները հետ «Искра»-յի համաժողովները հին տոմարով ելին ժամանակագրութեամբ: ԱՅ-ը լույս տեսաւ 1900 թ. դեկտեմբերի 24 (11)-ին:

Մինչև 2-րդ համաժողովարը լույս տեսաւ «Искра»-յի 45 համար: Յերկ-րորդ համաժողովարում, ղորը բաժանից մեծամասնութիւն և փոքրամասնութիւն, խմբագրութիւնը կազմված էր Լենինից, Պլեխանովից (մեծամասնութիւն կողմից) և Մարտովից (փոքրամասնութիւն կողմից): Ակտիւորը, Զատուլիչը և Պոտրեսովը, ղորոնց փոքրամասնութիւնն էլին հաւում, համաժողովարի կողմից խմբագրութիւն անդամ չընտրվեցին: Մարտովը նույնպէս հրաժարվեց մտնել խմբագրութիւն մեջ, և «Искра»-յի № № 46—51-ը լույս տեսան Լենինի ու Պլեխանովի խմբագրութիւնում: Նոյեմբերի 1-ին Լենինը «Искра»-յից դուրս յեկավ տաքակարծութիւն ունենալով Պլեխանովի հետ, ղորը հաշտվողականութիւն և փոքրամասնութիւն հետ մերձենալու ուղին էր ընկել: № 53-ը լույս տեսաւ Պլեխանովի միանշան խմբագրութիւն, ղորը հետո խմբագրութիւն մեջ կոտորացիայի յենթակից Մարտովին և համաժողովարը չընդունած Ակտիւ-րովին, Պոտրեսովին և Զատուլիչին: № 53-ից սկսած «Искра»-ն թեպէտ ձեակնորեն լույս է տեսնում իբրև կուսակցութիւն կենտրոնական որդան, իրոք փոքրամասնութիւն Ֆրակցիոն որդանն է և այդպիսին մնում և կիս մինչև իր վերջին համարը (112, 1905 թ. հոկտեմբեր): «Искра»-յի մեջակիկ-ները ձեռքն անցնելովը «Նոր» «Искра»-ն կորցնում է իր նախկին հեղափոխա-կան բնույթը և սկսում է պայքար մղել այն տակտիկական և կազմակերպա-կան գաղափարների դեմ, ղոր պրոպագանդ էլին արվում լենինյան «Искра»-յի եղևում և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի գործունեութիւն հիմքը դարձան: «Նին ու նոր «Искра»-յի միջև անդունդ է ընկած»—հայտարարեց փոքրամասնութիւնը Լ. Տրոցկու՝ այդ ժամանակաշրջանում իր աչքի ընկնող կազմակերպչներից միկի ընթանով:

Վ. Իլյիչի արխիվում գտնված է «Искра»-յի հոդվածները՝ Վ. Ի. Լենին-նի իր կազմած ցանկը (մինչև №45-ը ներառալ)՝ հեղինակները նշած: Այդ ցանկից յերևում է, ղոր «Մըագըր հարցի վերաբերալ» և «Ռեակցիոն ուժերի մօրիլիզացիան և մեր խնդիրները» հոդվածները, ղոր մահ էն Յերկերի առա-ջին հրատարակութիւն մեջ, Լենինին չին պատկանում (այդ հոդվածները Մար-տովին և գրելի նույն ցանկից հետևում է, ղոր առաջին հրատարակութիւն մեջ բաց են ընկել Լենինի միջանի հոդվածները՝ «Նոր տուրուդայ», «Տույցերի սկիզբը», «Միանկութիւն նշանները», «Մոսկվայի դուրատավականները» Յերկորդ հրատարակութիւն մեջ, հենց նոր թված հոդվածների հետ, մտցված են նույն-պէս միջանի գիտողութիւնները «Искра»-յից, ղորոնց անունը թեպէտ չկա վերը հիշված ցանկում՝ իրենց համեմատաբար քիչ կարեւոր լինելու պատճառով (ցանկը միայն հոդվածներին է վերաբերում), բայց, անտարակույս, Լենինին են պատկանում:

Կուսակցութիւն պատմութիւն մեջ դարաշրջան կազմող լենինյան «Искра»-ն միայն դրական խումը և դրական ձեռնարկութիւն չեր նա միաժամանակ կուսակցութիւն վերադարձման ու վերականգնման կազմակերպական կենտրոնն էր: Պաշտպանելով հեղափոխական մարքսիզմը և անհաշտ պայքար մղելով առ-

ցիալ-դեմոկրատիայի ոպորտունիստական թեկի և նաբոդնիկոսթյան դեմ, «Искра»-ն միաժամանակ Լենինի դեկադաբուլթյամբ պրակտիկ հաշվախան աշխատանք կատարեց խմբակայնութունը հաղթահարելու և սուսական ռոցիալ-դեմոկրատական կազմակերպութունները վերակազմելով՝ ամենախիստ կազմակերպական ցենտրալիզմի հիմունքներով միասնական կուսակցութուն դարձնելու գործում:

Կուսակցության վերակազմության նպատակով «Искра»-ն ստեղծեց «գործակալներ», «պրոֆեսսորալ հեղափոխականներ» կադրեր, վորոնք Յ-ամյա աշխատանքի ընթացքում կարողացան հասնել այն բանին, վոր կազմակերպութունները ճնշող մեծամասնութունն ընդունեց «խսկրիզիս» սկզբունքները, և դրանով հող պատրաստեցին Ձ-ը համապոստաբը հրավիրելու և կուսակցութունն իբրև կազմակերպված ամբողջութուն վերակառնելու համար:

«Թե ի՞նչպես քիչ եր միում, վոր «Искра»-ն հանգչեք դեմոկրատիայի սեքսումում, վորը շարադրում է Լենինի և Պորեխովի բանակցութունները Աշխատանքի ազատագրում» խմբի հետ 1900 թ. ոգոստոսին, բաց թողված և կետերով փոխարինված են Պլեխանովի մեքանի սուր արտահայտութունները «Բուռնդ» հասցեյին, ընդհանուր առմամբ, մոտ 5 տպադիր առդ:

Յ նկատի յև առնվում «Աշխատանքի ազատագրում» խմբի և արտասահմանյան «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միության» մեծամասնության միջև կատարված «պատակառմը» «Միության» II համագումարում 1900 թ. ապրիլին: Որթորոքալ մարքսիզմի տեսակետն ունեցող խմբի և «Միության» դեպի եղհոմիզմ և ուղիղիոնիզմ հակվող մեծամասնության միջև տարաձայնութուններն այդ ժամանակներն այնպիսի չափերի հասան, վոր Պմբին և նրա համախոհներին հարկադրեցին թողնել համագումարը, խղել «միության» հետ կազմակերպական հարաբերութունները և ստեղծել նոր «Սոցիալ-դեմոկրատ» ձեղափոխական կազմակերպութունը:

Յ Անհայա ել թե Պլեխանովն ինչ միջոցալ նկատի ունի, խոսելով (Լենինին) իր ստացած «հրամանի» մասին՝ Սարուվեյի վրա «չկրակել» Դեռևս այն ժամանակ, յերը Սարուվեյն իրեն մարքսիստ եր համարում, շրա հայացքների մեջ նրա՝ մարքսիզմից դեպի ուղիղիոնիզմ և ըուբժուական ջատագովականութուն հետադա եղուղեիան կանխորջող շեղումների առկայութունն իր ժամանակին արձանագրել եր Վ. Իլիչը, դեռ շատ վաղ այն ժամանակից, յերը Սարուվեյի՝ ըուբժուական դեմոկրատի փոխարիզիլը ակներև փոստ դարձավ բոլոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատներին, նույն թվում և Պլեխանովի համար: Դեռևս 1894 թ. առաջին կեսում, Սարուվեյի «Քննադատական դեմոկրատիստներ»-ի յերևան գալուց առաջ, Լենինը հարկավոր համարեց «Ժողովրդի բարեկամներ»-ի մեջ վերադասութուն տնել այն մասին, վոր ինքը հոմաձայն չե Սարուվեյի մեքանի հայացքներին, վոր նա ջարագրել է «Ռուսաստանի կապիտալիստական դարադացման հարցի վերաբերյալ հողվածում» («Sozialpolitisches Centralblatt», 1893 թ. հոկտեմբեր, №1): «Եես չեմ կարող չասել նույն-

պես,—ըսում էր Լենինը,—թե համերաշխ եմ նրա, այսինքն Ստրուվկյի հայտնած վաղ ըսվող դժուարքներին...» (Յեղիզերի I հատորի էջ 202)։

Ստրուվկյի 1894 թ. սեպտեմբերին լույս տեսած «Բնադրատական դեմոկրոթյունները» Լենինը հենց այն ժամանակ, 1894 թ. աշնանը, սուր քննադատական վերլուծման յանձարկեց «Մարքսիզմի արտացոլումը բուրժուական դրականութեան մեջ» ռեֆերատում Այդ ռեֆերատը հետո հիմք դարձավ Լենինի «Նարոդնիկության տեսեւական բովանդակութունը և նրա ըննադատութունը Կ. Ստրուվկյի գրքում» հոդվածին (հոդվածը գրված է 1894 թ. վերջին, ապագրված է դրաքննութեան վոչնացրած «Материалы к характеристике нашего хозяйственного развития» ժողովածվում, 1895 թ.)։ Ընդհակառակը, Պլեխանովը իր «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի դարգացման հարցի վերաբերյալ» գրքում (1894 թ. վերջ) Ստրուվկյի գրքի մեջ չի մերկացրել ռեվիզիոնիստական տեսչեւեցները և չի սահմանագծվել նրանցից, Ստրուվկին ամբողջովին իր պաշտպանութեան տակ տանելով Ուստի Լենինի՝ արտասահմանում յեղած ժամանակ (1895 թ. դարուն—աշուն) և «Աշխատանքի ազատագրում» խուճին այցելելիս համենայն դեպ Լենինից չէր կարող «հրաման» ելնել Պլեխանովին՝ «չկրակել» Ստրուվկյի վրա։ Հնարավոր է, վոր Պլեխանովը նկատի ունենար իր մի վորակի գրույցը Ա. Պարեսովի հետ, վորը նույնպես Պետերբուրգի կազմակերպութեան աչքի ընկնող ներկայացուցիչ էր և նույն 1895 թ. յեկել էր Շվեյցարիա Պլեխանովի մոտ։

4 «НОВОЕ СЛОВО»—ժուրնալ, վոր սկսեց լույս տեսնել 1894 թ., իւրեւ աջ նարոդնիկների որդան, Յ. Ն. Կրիվենկոյին ունենալով ղեկավար, 1897 թ., սկսած ազրիլյան գրքուկից, ժուրնալն անցավ ղեկավար մարքսիստների ձեռքը և, չնայած դրաքննչական հալածանքներին, դեմացով մինչև տարվա վերջը (վերջին, գնդեմբերյան, գրքուկը գրավեց լույս տեսնելիս, իսկ ժուրնալը դադարեց չորս միլիոնարի վորոշումով)։ Նրա խմբագրմանը մասնակցում էին՝ Պ. Ստրուվկին (Պ. Ս., Novus), Մ. Տուգան-Բարանովսկին, Ա. Մ. Կամիկովը, Վ. Պոսսեն Արխատակցում էին, բացի գրանից՝ Գ. Վ. Պլեխանովը (Ն. Կամենսկի), Վ. Ի. Զասուլիչը (Վ. Իվանով), Վ. Ի. Լենինը (Կ. Տ-ն), Յու. Մարտովը (Ա. Յեդրով), Մ. Բուլգակովը (Nemo), Մ. Գորկին, Վ. Վերեսայեվը և ուրիշ «НОВОЕ СЛОВО»-յի 1897 թ. սեպտեմբերյան գրքուկում Ստրուվկին ապադրեց «Բանվորների որեննդրական պարտպանութեան հարցերի վերաբերյալ միջադատին կոնգրեսը» հոդվածը, վորտեղ հայտարարում էր, Նիգելաի մի հոդվածի կապակցութեամբ, թե մարքսիստական թեորիայի մեջ, վոր ծագել է 40-ական թվականներին, ներկայումս «արդեն ընտրվածն է ինչ չի համապատասխանում իրականութեանը» և թե «սոցիալական կատարագործը», «վորը 40-ական թվականներին, արտադրութեան նյութական որակիտիվ պատճառներով, այնքան մոտիկ էր թվում, այժմ վոր թե հեռացել է, այլ պարզապես ուտիլիտական տեսադաւորից անհետացել է, ինչպէս յերկրաբանական գիտութունից անհետացել է հին պատկերացումը յերկրաբանական հանկարծական կործանումների մասին»։ Պլեխանովը, վոր աշխատակցում էր «НОВОЕ СЛОВО»-յին, հորեւ վոր չհամարեց հանգեւ դալ ժուրնալի մեջ Ստրուվկյի տնցկացրած հայացքներին

դեմ, Պլեխանովը լուսթյունն այդ հարցում չափազանց ազդեցնում էր այդ ժամանակ Սերբիում գտնվող Լենինին, վերը 1899 թ. հունիսի 29-ին այդ առթիվ գրում էր Պատերազմին. «Միայն մի բան չեմ հասկանում, թե ինչպես համենակին զարդը էր անպատասխան թողնել Ստրավկայի և Բուլգակովի հոգովածները «Новое слово»-ում նախնիի դեմ Դուռը այդ ինչ չնչը քայտարի արդյոք» («Ленинский сборник» IV):

5 Նկոնոմիստների դեմ ուղղված էր «Vademecum («Ուղեցույց» — Դսմբ.) Рабочее дело — յի խմբագրության համար»-ի մեջ (1900 թ.) Գ. Պլեխանովը ուրիշ գովառմաններ էր շարքին հրապարակեց սկզբունքային նշանակութուն ունեցող, բայց ձևականորեն մասնավոր յերկու նամակ, մեկը՝ Մ. Մ. - ին (ն. Գ. Կուսկովա, «Credo»-յի հեղինակը) պատկանող, մյուսը՝ Գ. - ին (բուսդիստ «Դերելին» — Ց. Կոպելզոն, այն ժամանակ «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միության» անդամվոր գործիչը): Յերկու նամակն էլ անտարակուսելիորեն վիպում էին իրենց հեղինակները ռեվիզիոնիստական հայացքների մասին, Լենինն անաստարակ լրովին համեմատելով և երկրաչափում էր պլեխանովյան «Vademecum» - ի հետ ինչպես պաշտոնապես, մասնալի մեջ, այնպես էլ «խեղրայականներէ» հետ թղթակցելիս Ն. Կրուպսկայային ուղղված նամակում, վերը գրված և մոտավորապես նույն ժամանակ, ինչ և «Թե ինչպես քիչ էր մնում, վեր «Искра»-ն հանգչեք» գրանցումը, Լենինը գրում էր. «... Պլեխանովի դեմ ուղղված ամեն անասակի մեղադրանքների դեմ ամենից առաջ պետք է սահմանել, վեր նրա ընդլուրբի վրոջ նյութը ինչպե՞ս հենց պատերազմ հայտարարելն է «լեքեղիզմի» և «կուսկովովականության» շանարգական» սկզբունքներին, հենց սկզբունքային պատկերառն է, իսկ պատկերառնը, «ձեռնկառողը»։ «Միության» մեջ՝ միմիայն այդ սկզբունքային ձեռնկառողի կողմակի արդյունքն է» («Ленинский сборник» I):

6 «Մեր յերրորդը», այսինքն Յու. Ռ. Մարտովը («Յեղոր»), վերը Պլեխանովի և «Աշխատանքի ազատագրում» խմբի ուրիշ անդամների հետ Լենինի ու Պատերազմի բանակցութունների ժամանակ գտնվում էր դեռևս Ռուսաստանի հարավում և յեկավ Մյունխեն, վորտեղ հիմնավորվել էր «Искра» - յի խմբագրութունը, միմիայն 1901 թ. մարտին:

7 Հրեյական բանվորական ընդանրական միություն Լնիաստանում, Լիտվայում յեղ Ռուսաստանում («Բոնդ»), վորն էր գործունեյութան մեջ ընդգրկում էր գլխավորապես հրեյական արհեստավորների մասսաները, կազմվել է 1897 թ. սեպտեմբերին հրեյական սոց-դեմ. խմբերի սահմանադիր համադումում Պլեխանովի «Բուսդի» գլխավոր որդաններն են՝ «Arbeiterstimme» («Բանվորական ձայն»), հրատարակվում էր Ռուսաստանում անիդալ, և «Jüdischer Arbeiter» («Հրեյական բանվոր»), հրատարակում էր Ժընևիում Բուսդի Արտասահմանյան կոմիտեն 1901 թվականից Բուսդի արտասահմանում ունեց հրատարակել «Последние известия» ինֆորմացիոն թերթիկը (մինչև 1906 թ. հունվարը լույս տեսան 256 համար): Բուսդն էր տակակիայով և քաղաքականությամբ ավելի մոտիկ կապված էր եղևնոմիստներին, քան «խեղրայականներին»:

Բուսդը Ռ. Մ. - Դ. Բ. Կ. - ի մեջ մտավ նրա առաջին համագումարում 1898 թ. ինչպես ավտոմոմ կազմակերպութուն, ինքնուրույն միայն հատկա-

պետ հրեյական պրոլետարիատին վերաբերող հարցերում» Իր IV համագումարում (1901 թ. ապրիլին) Բոլնդը բանաձև ընդունեց ավտոնոմիան ֆեդերացիայով փոխարինելու մասին. «Ռ. Ս. - Դ. Բ. Կ. պատկերացնելով իբրև Ռուսական պետության մեջ բնական ընդ որ ազգությունները սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ֆեդերատիվ միավորում, համագումարը վերոհեց, վոր Բոլնդը, իբրև հրեյական պրոլետարիատի ներկայացուցիչ, նրա մեջ մտել է իբրև ֆեդերատիվ մաս, և Բոլնդի Կենտրոնական կոմիտեյին հանձնարարում և կյանք մտցնել այս վորոշումը»։ Բոլնդի բանաձևը կուսակցության մեջ իր դրուժությունը փոփոխելու մասին, նույնպես և աղքատի հարցին վերաբերող բանաձևը, վոր ղեկավարելու եր անում նախնականի դմին, անհապաղ առաջ բերին «Искра» - յի խմբագրության առարկությունը և Բոլնդի Կ. Կ. - ի պատասխանը («Искра» № 7 և 8)։ «Рабочее дело»-ն բարյացակամ զիրք բռնեց IV համագումարի բանաձևերի վերաբերմամբ (տես В. Кричевский, «По поводу IV съезда Бунда» «Р. д.» - յի մեջ, № 11 — 12)։ Բոլնդի սեպարատիստական տենդենցները շարունակում են զարգանալ, — և 1903 թ. 2 - րդ համագումարի նախապատրաստման կապակցությամբ, հանգեցրին «Искра» - յի գրական սուր դիտկոսիային Բոլնդի հետ այն հարցի վերաբերյալ, թե հրեյական պրոլետարիատին անհրաժեշտ և սեփական բանվորական կուսակցություն Ռ. Ս. - Դ. Բ. Կ. 2 - րդ համագումարում 1903 թ. Բոլնդը դուրս յեկավ կուսակցությունից, յերբ համագումարը մերժեց նրա պահանջը՝ Բոլնդը հրեյական պրոլետարիատի միակ ներկայացուցիչ ճանաչելու և կուսակցության կառուցվածքը ֆեդերատիվ սկզբունքներով ընդունելու մասին։

8 «Բոլոն» — Գ. Բ. Սարուվեն և

9 Հատ յերեւույթին Լ. Ի. Ակսելրոդը (Որթողոջ) — հետադայում՝ մարքսիստ կին գրող փիլիսոփայական մատերիալիզմի հարցերի վերաբերյալ. հեղինակ մի շարք աշխատությունների (հավաքված «Философские очерки» «Փիլիսոփայական ուրվագծեր») — 1906 թ., «Против идеализма» («Իդեալիզմի դեմ») — 1922 թ. — ժողովածուների մեջ)։ «Заря» - յի մեջ ազգագրված էյին նրա հոդվածները՝ «Почему мы не хотим идти назад?» («Ինչու մենք չենք ուզում հետ գնալ») (Բերդյայեվի դեմ) № 2 — 3 - ում և «О некоторых философских упражнениях некоторых критиков» («Միջանի ճշմարտաների» փիլիսոփայական միջանի մարդանջների մասին) (Սարուվայի դեմ) № 4 - ում։

10 «Neue Zeit» («Նոր ժամանակ») — գերմանական սոցիալ-դեմոկրատիայի գերմանական ժուրնալը, վոր լույս եր տեսնում 1883 թ. մինչև 1922 թ. Պատերազմից առաջ ժուրնալի խմբագիրը Կ. Կառլսկին եր 1889 — 1902 թ.թ. ժամանակաշրջանում «Neue Zeit» - ին աշխատակցում էյին՝ Ա. Բեբելը, Ե. Բերնշտայնը, Գ. Կոնսոլը, Գ. Լաֆարգը, Վ. Լիբկնեխտը, Ֆր. Մեբինգը, Ե. Վանդերվեյդեն, Ա. Լաբբիոտան, Կ. Յեակինը, Ռ. Լյուքսեմբուրգը, Պարվուսը, Վ. Ադլերը և ուրիշները։

1897 թ. Ե. Բերնշտայնը «Neue Zeit» - ում առանց խմբագրության վորևէ վերադասման սկսեց ազգագրել իր ռեվիզիոնիստական «Probleme des Sozialismus» («Սոցիալիզմի ոլորդեմները»)։ «Պրոբլեմներ» առաջին սերիայի հոդ-

վածներից մեկը, վորը բացասաբար եր վերաբերվում կապիտալիստական հասարակության անխուսափելի կործանման և հեղափոխական հեղաշրջման թեորիային («Zusammenbruchtheorie»), սուր հակաճառություն առաջ բերեց Պարվուսի կողմից, վորը արձանագրում եր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ սեվիդիտների մտաշնայլը, Յերը Բերնշտայնը «Neue Zeit»-ի 1897—1898 թ.թ. № 34 և 39-ում հրապարակեց իր «պրոբլեմներին» յերկրորդ սերիան («Das realistische und das ideologische Moment im sozialismus» — «Ռեալիստական և իդեոլոգիական մոմենտը սոցիալիզմի մեջ»), «Neue Zeit»-ի խմբագրությունը հարկադրված եր ժուրնալի ելերում դիսկուսիա քանալ այն կապակցությամբ, վոր Բերնշտայնը բացահայտ վերանայման և յենթարկում մարբադմի ըուր հիմնական դրույթները, Իբրև դիսկուսիոն առաջին հոգիած անցավ Գ. Պլեխանովի «Bernstein und der Materialismus» («Բերնշտայնը և մատերիալիզմը») հոդվածը «Neue Zeit»-ի 19. VII. 1898 թ. № 44-ում, հետո հեռանցին Պլեխանովի հոդվածները Կոնրադ Շմիդտի դեմ, վորին Բերնշտայնը քառ իր սեփական խոսքերի, պարտական եր փրկստիպյալության մեջ մատերիալիզմից դեպի կանտականություն իր կատարած շրջադարձը (Պլեխանովի հոդվածները՝ «Konrad Schmidt gegen Karl Marx und Friedrich Engels» — «Կոնրադ Շմիդտը Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի դեմ» XI. 1898 թ. № 5-ում, «Materialismus oder Kantianismus» — «Մատերիալիզմ թե կանտականություն» № 19 և 20-ում), Նույն 1898 թ. Պլեխանովը մի բաց նամակով դիմեց Կառլ Մարքսին՝ սեվիդիտների հետ որթողությանը ունեցած վեճի մեջ նրա բռնած անբավարար վորոշ դիրքի առթիվ, Հետագայում «Neue Zeit»-ի խմբագրությունը Բերնշտայնի հոդվածները չեւր տպագրում, և Բերնշտայնը դրանք առանձին գրքով լույս ընծայեց (հայտնի «Բերնշտայնի գրքեր», ռեվիզիոնիզմի ավետարանը՝ «Die Voraussetzungen des Sozialismus und die Aufgaben der Sozialdemokratie», Dietz-Verlag. 1899 թ. — «Սոցիալիզմի նախադրյալները և սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները», գրքը լույս և տեսել 1899 թ. մարտին)։ Այդ ժամանակաշրջանի՝ Պլեխանովի փրկստիպյալական թեմայով հոդվածները տպագրված են նրա Յերկերի XI հատորում։

11 «Սոցիալ-դեմոկրատ» հեղափոխական կադմակեբալությունը առաջ յեկավ «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միություն» պառակտումից հետո նրա 2-րդ համագումարում (1900 թ. ապրիլին ժընևեղում), կադմիկովով «Աշխատանքի ազատագրում» խմբից և Միություն այն անդամներից (Բլյումինֆելդ, Լինդով, Գուդենբերգ-Մեդկովսկի, Կոլցով և ուր.), վորոնք Պարին եյին պաշտպանում Միության մեծամասնության դեմ նրա մղած պայքարում և նրա հետ միասին հեռացան 2-րդ համագումարից։ Կադմակեբալությունը (սիլզում յենթադրվում եր այն անվանել «Ռուսական սոցիալ-դեմոկրատական միություն») գոյություն ունեցավ մինչև 1901 թ. հոկտեմբերը, յերբ «Искра»-յի և «Заря»-յի խմբի հետ միասին կադմեց «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի արտասահմանյան լիգան»։ «Սոցիալ-դեմոկրատի» ֆիրմայով լույս տեսան «Красное знамя в России» (Մարտովի), «Из записной книжки социал-демократа» (Պլեխանովի) և թարգմանական միջանի բրոշյուր։

12 N—Նյուրնբերգ, վորտեղ յեղավ Վ. Իլլին ժընկվից Մյունխեն դնալիս («Некра»-յի խմբի և «Ալթաուտանքի աղատադրում» խմբի համադումարեց հետո) և վորտեղից նա սեպտեմբերի 5-ին ուղարկեց X-ին ուղղված նամակը (տես «Ленинскому Сборнику» I և նամակադրության համապատասխան հատորը Յերկեբի 3-րդ հրատարակության մեջ), հենց այդ նամակն է, վոր թույլ է տալիս N-ի Նյուրնբերգ լինելը ավերածանելու:

13 Յերկաթուղու վազոնում սեպտեմբերի առաջին թվերին Վ. Իլլին դրած պայմանագրի նախադիժը մեղ անհայտ էր Խոստիսուտաի արխիվում պահպանվել և ավելի ուշ ժամանակի մի մեքենադրված նախադիժ՝ հեկտեմբերի 6 թվադրված և հիմնականում, ըստ յերեռութեն, նույնպես Վ. Իլլինի պատկանող:

Բերում ենք այդ պայմանագրի տեքստը.

«1. «Заря» ժողովածուն և «Некра» որաթերթը հրատարակում և խմբագրում է Ռուսական սոցիալ-դեմոկրատները խումբը «Ալթաուտանքի աղատադրում» խմբի խմբադրական մասնակցությամբ:

2. Սկզբունքային և առանձնապես լուրջ ճշանակութուն ունեցող բոլոր հոդվածները խմբադրությունը, յեթե այդ ըստ խմբադրական-տեխնիկական պայմանների անհնարին չեն, հաղորդում և «Ալթաուտանքի աղատադրում» խմբի բոլոր անդամներին:

3. «Ալթաուտանքի աղատադրում» խմբի անդամները խմբադրական բոլոր հարցերով քվեարկում են՝ անձամբ—խմբադրության ընակավայրում դանդիլիս, գրավոր—յերբ նրանց հաղորդվում են հոդվածները:

4. «Ալթաուտանքի աղատադրում» խմբի հետ տարածայնվու դեպքում խմբադրությունը պարտավորվում է ամբողջությամբ տղադել խմբի կամ նրա յուրաքանչյուր անդամի հատուկ կարծիքն առանձին:

5. Հրատարակման յենթակա յե այս համաձայնության միայն առաջին կեսը:


14 Այստեղ հրատարակվող դեկլամենտը գրականության մեջ հայտնի յե «Աղդ Некра»-յի հրատարակության մասին» անունով (այդ վերնագրով, ել նա դետեղված է Լենինի Յերկեբի առաջին հրատարակության մեջ): Հեղինակն ինքը իր նամակադրության մեջ այդ դեկլամենտն ամենուրեք անվանում է «Հայտարարություն»։ Այդ անունը պահված և նաև ներկա հրատարակության մեջ: Հայտարարության սկզբնական նախադիժը (տես Յերկեբի IV հատոր, էջ 1, 3-րդ հրատ.) միաժամանակ շարադրում եր յերկու արգանի ծրագիրը՝ ժուրնալի և որաթերթի: Ներկա հայտարարությունը «Некра»-յի խմբադրությունից և բղխում միայն «Заря»-յի խմբիցները յենթադրվում եր շարադրել մի հատուկ հոդվածում, ժուրնալի առաջին համարում, բայց խմբադրությունից անկախ հանգամանքների պատճառով, այդ նախադիժը չէրադրեմված մնաց:

Վաղիմիր Իլլինի գրած և խմբադրության մյուս անդամները լրացրած հայտարարությունից տղադրվեց արաստանմանում յերկու անդամ Հայտարարությունն սկզբում տղադրվեց 1900 թ. նոյեմբերին՝ «Некра»-յի № 1-ի լույս տեսնելուց առաջ, իբրև մի առանձին թերթիկ (յերկու էջով) այսպիսի վերնագրով. «Բուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցություն

Искра», Հետո դալիս եր Լոպիտալի. «Կայծից հրդեհ կըրըսքովի (դեկաբրիստները պատասխանը Պուշկինին)» 1903 թ. վերջում կամ 1904 թվականին այն ժամանակ մենչեիկները ձեռքին դանվող «Искра»-յի խմբագրութունը վերահրատարակեց թերթիկը (սխալներով և մեջանի կրճատումներով), ընդգրկում հայտարարության վերնագրերը փոխվել և այսպիսի տեսք եր ընդունել. «Պրոլետարները բոլոր յերկրների, միացե՛ք Искра! Բուսաստանի Սոցիալ-դեմոկրատական Բանվորական Կուսակցության Կենտրոնական օրգան» Այնուհետև դալիս եր նույն Լոպիտալի, Հայտարարության տեքստը ազդարարված և թերթի մի յերեսին:

15 «Բանվոր դասակարգի ինքնազատագրման խումբ»—փոքր և սակավ ազդեցիկ մի խումբ, առաջ և յեկել 1898 թ. աշնանը (Պետերբուրգում), լիկվիդացիայի յն յնթարկվել պահանջական բաժանմունքի կողմից հաջորդ տարվա ապրիլին Դ. Վ. Գուբարևի, Կ. Ա. Պոպովի և Վ. Ա. Պոպովի կողմից ղեկավարած խումբն իր հայացքներով մոտիկ եր եղևոսմոտներին և «Рабочая Мысль»-ին Իր դոքտրինայի կարճատև ժամանակի ընթացքում Խումբը կարողացավ կազմել «մանիֆեստ» կամ «կոչ» [հրատարակված և Լոնդոնում հրատարակված «Накануне» ժուրնալում, № 7, 1899թ. հուլիս, իբրև «Բանվորների ինքնազատագրման խմբի» (և վաղ «բանվոր դասակարգի») կոչ. Լենինը վերլուծեց և «Ինչ անել»-ի մեջ], խմբի կանոնադրութունը և բանվորներին ուղղված միջանի թուղթիկ (Պարբ. մասին տես՝ В—в, «Петербургское движение и практические задачи социал-демократов», «Рабочее дело» № 6, 1900-և В. Михайлова. Из комментариев к «Что делать?» «Красная летопись» № 1 1925թ.):

16 «Рабочее дело»—արտասահմանյան «Բուսական սոցիալ-դեմոկրատական միության» օրգանը, սկսեց լույս տեսնել «Апостол рабочих»-յի փոխարեն, յոքը «Աշխատանքի ազատագրում» խումբը Միության 1898 թ. համագումարում հրաժարվեց Միության հրատարակութունները խմբագրելուց, Ժուրնալը խմբագրում Ելին Բ. Կրիչևսկին, Սերբյայեր (Պ. Տեպլովը) և Վ. Իվանչևինը («Р. Ա.»-ի ամենամոտիկ աշխատակիցը, իսկ ավելի ուշ նաև խմբագիրն եր Ա. Մարտինովը (Պրիկեր): Ընդամենը լույս տեսավ 12 համար (9 զբոսով, վորոնցից 3-ը՝ № № 2-3-ը, 4-5-ը և 11-12-ը կրկնակի համարներ Ելին), № 1-ը լույս տեսավ 1899 թ. ապրիլին, № 11-12-ը 1902 թ. փետրվարին «Р. Ա.»-ի խմբագրությամբ լույս Ելին տեսնում նաև «Апостол рабочего дела» (1900-1901 թ.-թ. 8 համար) և հիկտոգրաֆով զբոսով բյուլլետեններ «Из материалов редакции» վերնագրով (1902 թ.): «Рабочее дело»-յի և «Апостол»-ի գաղարկուց հետո «Միությունը» լույս ընծայեց 3 համար «Красное знамя» (1902 թ. նոյեմբեր—1903թ. հունվար):



Տեխ. խմբագիր Ա. Խաչատրյան
Կոմս. Սրբազորի Վ. Թեղթրություն
Սրբազորի Ա. Տ.Սիբիրյան
Հանդես քաղվեց 19 ապրիլի 1934 թ.
Ցայել բաշխարկեց 7 հունիսի 1934 թ.

Համ. № 218, ինքնա — ПЛИ
— — — — — НП

Պատվեր № 117

Գումար № 7853 (Բ) Տիպո 5000

Թղթի լիպիք թեր 1 քա. 62x94

$\frac{1}{2}$ քա. թեր, 1 քա. թերում 34,128 քա. ծան)

Կապիտալի արդյուն, Տեղեկագ, Ավանդական ք. № 27

Тех. редактор С. Хачатрян

Контр. коррек. В. Терзизамян

Корректор А. Т.-Мкртчян

Сдано в набор 19 апреля 1934 г.

Подписано к печати 7 июня 1934 г.

Армиздат № 218 Индекс — ПЛИ
— — — — — НП

Типография Партиздата ЦК АН(6) А
Эривань, ул. Аллавердян. № 27

գաւ Հիմնարար գիտ. գրադ.



220038574

[164]

ՀԻՆԸ 30 Կ.

A $\frac{\pi}{38574}$

1900-1903



В. И. ЛЕНИН
Как чуть не потухла
«Искра»

Партиздат, 1934 Эривань